

**Գեղամ Մ. Բաղայան**

*Պատմ. գիյ. թեկնածու*

## **ՇԻՐԱԿԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ**

### **ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

Պատմա-աշխարհագրական դիտարկումներ\*

**Բանալի բառեր** – Շիրակ, Բավաց ձոր, Բեռնուս, Գոռոխունեց, Դրաշպետ, Եզնկա, Երգք, Կարմնջաձորի վանք, Հոռոմոսի վանք, Մարաց մարգ, Սահառունիք, Քեղարագոմ:

### **Մուտք**

Շիրակը հնագույն ժամանակներից եղել է Հայաստանի առավել բազմամարդ գավառներից մեկը: Այդ մասին է վկայում Պատմահայր Խորենացու հետևյալ թևավոր արտահայտությունը. «Թէ քո Շարայի որկորն է՝ մեր Շիրակայ ամբարքն չեն»<sup>1</sup>:

Ցավոք, գավառի բնակավայրերի ամբողջական կամ մանրամասն ցուցակներ չեն պահպանվել, իսկ հայ մատենագիրների երկերում Շիրակից հիշատակված քաղաքները, գյուղերը, վանքերը, ամրոցները հազիվ են գերազանցում 2 տասնյակը, ինչն իրականում եղածի շատ փոքր մասն է միայն: Ընդ որում, բազմիցս ավերիչ պատերազմներ տեսած և գրեթե ամբողջովին անայացած գավառի արևելյան ու արևմտյան հատվածներում 20-րդ դ. սկզբին բնակեցված գյուղերի և ավանների թիվն անցնում էր 250-ից: Կասկածից վեր է, որ հայոց պետականության գոյության ընթացքում դրանք անհամեմատ ավելի շատ են եղել, իսկ 10-11-րդ դդ.՝ Բագրատունյաց հզորության դարաշրջանում, Շիրակը վերածվել էր հայոց արքունի ոստանի, ուստի բնակավայրերի

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.04.2022:

1 **Սովետս Խորենացի**, Հայոց պատմություն, Եր., 1981, էջ 48 (49):

առավել խիտ ցանց ունեցող տարածաշրջաններից մեկն էր: Դա լավագույնս ցույց է տալիս մայրաքաղաք **Անիի** և նրա գավառի հոգևոր կենտրոնների (**Արջնառիձ, Բագնայր, Լմբատավանք, Հատիձ, Հոռոմոս, Մարմաշեն** ևն) վիմագիր արձանագրությունների տեղանվանագիտական տվյալների քննությունը: Բարեբախտաբար, դրանցում հիշատակվող բնակավայրերը և այլ տեղավայրեր (առանձին թաղամասեր, ագարակներ, հանդամասեր, կավածքներ ևն) հաշվվում են տասնյակներով, ինչը զգալիորեն լրացնում է պատմիչների տեղեկությունները: Պատահական չէ, որ Ղ. Ալիշանը, Շիրակի տեղագրության ուսումնասիրության առումով հիանալի գիտակցելով հայերեն վիմագիր արձանագրությունների կարևորությունը, նշել է. «Որչափ ինչ գտանեմ արձանագրութիւնս՝ զամենայն կամիմ մուծանել ի տեղագրութիւնս, որոյ պատուականագոյն մասն համարիմ»<sup>2</sup>: Ցավոք, Շիրակի տեղանունների մի զգալի մասը ևս անդառնալիորեն կորել է եկամուտ թյուրք քոչվորների ապականող և ոչնչացնող ալիքի ազդեցությամբ՝ հաճախ փոխարինվելով օտարահունչ խորթ անվանումներով: Այնուամենայնիվ, չնոռանանք, որ հայկական տեղանունները, որպես կանոն, թարգմանվում կամ հարմարեցվում էին քոչվորների պարզունակ լեզվին:

Արդեն Շիրակի հուշարձանների առաջին ուսումնասիրողները, մասնավորապես՝ Ն. Մարգիսյանն ու Ղ. Ալիշանը, փորձել են ճշտել գերազանցապես արձանագրություններում հանդիպող մի շարք բնակավայրերի անվանումներն ու տեղադրությունը, մաքրել դրանք ծածկող օտարահունչ ժանգը (**Աստախանա – Աստեղանի, Մոքյուզ – Մոգուաց/Մոգույք, Ղոզլիջա – Բագնայր > Բզներ, Ալեմ – Ալաման, Ալաջա – Արջնառիձ** ևն)<sup>3</sup>: Ընդ որում, Ղ. Ալիշանն ավստոսանքով է մատնանշել, որ հիշատակվող բազմաթիվ բնակավայրեր լրիվ անհետացել են, ինչը թույլ չի տալիս ճշտել դրանց ստույգ տեղադրությունը<sup>4</sup>: Մեկ այլ առիթով, խոսելով Անիից շուրջ 20 կմ հարավ-արևմուտք ընկած **Թաշնիկ** գյուղի մասին (տե՛ս ստորև՝ 25-րդ ծանոթագրությունը), մեծանուն հայագետը նշում է, որ շրջակա ամայի բնակավայրերը «երբեմն շինախիտ էին»<sup>5</sup>: Իրոք, Շիրակի պատմական աշխարհագրությանն ու

2 **Ալիշան Ղ.** Շիրակ: Տեղագրութիւն-պատկերացոյց, Վենետիկ-Սբ. Ղազար, 1881, «Ծանօթութիւնք» բաժին (առանց էջակալման):  
 3 Տե՛ս նույն տեղում, էջ 8, 33, 128 ևն:  
 4 Տե՛ս նույն տեղում, էջ 33, 125:  
 5 Նույն տեղում, էջ 125:

տեղանվանագիտությանն առնչվող բազմաթիվ հարցեր առ այսօր դեռ բավարար չափով ուսումնասիրված չեն, հետևաբար մեծ աշխատանք կա անելու: Ստորև ներկայացվող դիտարկումներն ու տեսակետները այդ հարցի առումով առանձին բացեր լրացնելու մի համեստ փորձ են:

## Ա. Բնակավայրերի տեղադրությունը

1. **Բավաց ձոր:** Բնակավայրն առաջին անգամ հիշատակում է **Ստեփաննոս Տարոնեցին** (Ասողիկ) Անիի շահնշահ **Սմբատ Բ Բագրատունու** (977–990) կողմից իր հորեղբորը՝ Վանանդի թագավոր **Մուշեղին** պատկանող Ճակատք գավառի **Շատիկ** բերդի գրավման առիթով: Դրան անմիջապես հետևել էր **Մուշեղի** և Տայքի կառավարիչ **Դավիթ Կյուրապաղատի** համատեղ արշավանքը՝ վերոնշյալ բերդը վերադարձնելու նպատակով: Ճակատքի ճանապարհին միացյալ զորքը հանգրվանել էր Շիրակի **Բավաց ձոր** («Բաւաց ձոր») գյուղում<sup>6</sup>: Ինչպես հայտնի է, **Ճակատքն** ընկած էր Երասխից հարավ՝ գրավելով **Կողբի** հայտնի աղահանքերի շրջանը, և տարածվում էր մինչև Հայկական պար: Ընդ որում, Շիրակից **Ճակատք** անցնելու համար Մուշեղն ու Դավիթ Կյուրապաղատը պետք է անցնեին **Երասխաձորով** (Արշարունիք, ավելի ուշ՝ Աշորնեք): Ըստ այդմ՝ **Ճակատք** զորքը պետք է մուտք գործեր Շիրակի հարավարևմտյան հատվածով: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Ղ. Ալիշանը **Բավաց ձորը** փնտրում է Շիրակի և Երասխաձորի սահմանագլխին ընկած գույգ **Բվիկ** (Բուիկ, Փիվիկ, Վերին կամ Հայկական և Ստորին) գյուղերի շրջանում<sup>7</sup>: Ըստ այդմ՝ նախնական **Բաւաց ձոր** տեղանունը հայերենին հատուկ լեզվաբանական օրինաչափությամբ վերածվել է նախ **Բօվաց ձոր**-ի, որն էլ կրճատվելով դարձել է **Բուիկ** (Բվիկ): Ընդհանուր առմամբ, ընդունելով մեծանուն հայագետի տեսակետը, հարկ ենք համարում ավելի որոշակիացնել քննարկվող գյուղի տեղադրությունը: Ըստ էության, խոսքը վերաբերում է **Վերին** (Հայկական) **Բվիկին**, որն իրոք գտնվում էր Շիրակի տարածքում՝ ի

6 Տե՛ս «Ստեփաննոսի Տարոնեցոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական» (այսուհետ՝ **Ասողիկ**), Ս. Պետերբուրգ, 1885, էջ 188: Որպես կանոն, ուսումնասիրողները Շատիկը տեղադրում են Կողբից արևմուտք **Բառնակուտ** ավանի շրջանում **Աղտոճորի** (այժմ Ախտա) ռազմավարական մեծ նշանակություն ունեցող լեռնանցքի ճանապարհին (տե՛ս մասնավորապես **Երեմյան Ս. Տ.**, Հայաստանը և հարևան երկրները 855-953 թթ. (քարտեզ), «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 3, Եր., 1976): Մեր կարծիքով **Շատիկը** գտնվել է 20-րդ դ. սկզբին Ղուլա գյուղի մոտ (թրք. kule – «աշտարակ», նաև՝ «բերդի աշտարակ», «բերդակ»):

7 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 33, 135:

տարբերություն **Ներքինի** (թրք. Süflâ Pivik), որն ընկած էր Ճակատքը **Երասխաձորից** բաժանող փոքր լեռնապարից հարավ, հետևաբար չէր կարող մտնել Շիրակի կազմի մեջ, ինչպես հաղորդում է **Ասողիկը**: Բացի այդ՝ Ներքին Բվիկը, որը քրդաբնակ էր, հիմնադրվել էր 1820-ական թթ.՝ **Վերին Բվիկից** տեղափոխված քրդերի կողմից, որոնք բռնի վտարել էին հայերին<sup>8</sup>: Հետևաբար կարծում ենք, որ բնակավայրի սկզբնական անվանումը նոռացվել է՝ փոխարինվելով նորեկների կողմից տրված «մայր» գյուղի անվամբ: Ըստ այդմ՝ Բավաց ձոր/Բվիկը նախապես եղել է մեկը: Ի դեպ, նույն գյուղը հանդիպում է **Հոռոմուսի վանքի** (Սուրբ Հովհաննես, նոր ժամանակներում՝ **Ղոշավանք** կամ **Խոշավանք**) 1266-ով թվագրվող (ՉԴԵ) մի արձանագրությունում. «Շնորհին Աստուծոյ եւ **Մամուկսթի** դուստր **Վարհնա** ետու ի **Սուրբ Յովհաննէս** ի մեր տապանատունս գեղանց մարգ ի **Բովաչորու** (իմա՝ **Բովաչուր** < **Բաւաց ձոր** – Գ. Բ.) կարմնջէն ի **Վաղաւերու** ճամբահն...»<sup>9</sup>: Ընդ որում, Ղ. Ալիշանը տեղանունը սրբագրել է **Բովաձոր**<sup>10</sup>, ինչը լիովին ընդունելի է, եթե հաշվի առնենք «ձոր» և «ջուր» տեղանվանակերտների նույնականությունը: Ի դեպ, արձանագրությունում հանդիպող **Եղանց մարգ** տեղավայրը մեկ անգամ ևս հավաստում է Ղ. Ալիշանի իրավացիությունը, որ **Բավաց ձորը** (Բովաչոր) համապատասխանում է **Բվիկին**: Բանն այն է, որ **Բվիկը** գտնվում է Շիրակի հարավարևմտյան սահմանագլխին բարձրացող և այժմ **Յաղլուջա** (թրք. Yağlica) օտարահունչ անունը կրող լեռան ստորոտին: Ըստ էության, վերջինս հայերեն **Եղանց** տեղանվան թրքերեն իմաստավորումն է և բառացի նշանակում է «յուղոտ»: Սակայն տվյալ պարագայում այն կարելի է հասկանալ նաև «փարթամ», «խոտավետ» կամ «հյութեղ»՝ նկատի ունենալով լեռան լանջերին տարածվող հարուստ մարգագետիններն ու արոտավայրերը<sup>11</sup>: Մեր կարծիքով՝ լեռը կոչվել է **Եղանց սար** (իմա՝ «եղնիկների սար» – Գ. Բ.), իսկ 1266 թ. արձանագրությունում նշված է Հոռոմուսին ընծայված **Եղանց մարգ** արոտավայրը:

8 Տե՛ս **Աղանյան Ա.**, Մի տեղեկագիր Կարսի մարզի վերաբերյալ, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 1970, N 2, էջ 100-101:  
 9 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 26: Հմմտ. **Baladian A., Thierry J.-M.**, Le Couvent de Horomos d'après les archives de Toros Toramanian (այսուհետ՝ **Թորամանյան**), “Monuments et memoires de la Fondation Eugen Piot”, tome 81, Paris, 2002, էջ 200:  
 10 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 33:  
 11 Ի դեպ, թուրքերեն «yağlı») բառը փոխառություն է հայերեն «յուղ»-ից (թրք. «եղ») (տե՛ս **Աճառեան Հ.**, Հայերէն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ), հատ. Բ, Եր., 1973, էջ 252-253):

2. **Բեռնոս** (տարբերակ՝ **Բեռնոսս** < **Բեռնուս**): Կրկին հանդիպում է Ասողիկի երկում: Այստեղ՝ իր անունով վերակոչված եկեղեցում է թաղվել Վահանանց պատերազմի տարիներին նահատակված երանելի **Տյառնթագ Արշարունեցին**<sup>12</sup>: Ղ. Ալիշանը ենթադրաբար գյուղը նույնացրել է Կարսի (Վանանդ) **Բեռնա** կամ **Բերնա** բնակավայրի հետ: Չբացառելով, որ հարևան գավառներում կարող էին լինել նույնանուն գյուղեր (այդ մասին կխոսենք ստորև՝ Դրաշպետ գյուղի առնչությամբ), պետք է նկատի ունենալ, որ Ասողիկը Բեռնոսը որոշակիորեն նշում է Շիրակում<sup>13</sup>: Մեր կարծիքով՝ այն նույնանուն է Արևմտյան Շիրակի **Աղուզում** գյուղի հետ, որը գտնվում է **Կարսագետի** (պատմական **Ախուրյան**) և դրա **Ռահ** վտակի (այժմ՝ ՀՀ արևմտյան սահմանը համարվող Ախուրյան գետը, թրք. Arpaçay) միախառնման վայրից փոքրինչ հյուսիս-արևմուտք: Վերոհիշյալ տեղանունն ուղղակիորեն թարգմանվել է Շիրակ թափանցած թյուրքերի կողմից՝ ստանալով «բերանս» (թրք. ağızım) իմաստը: Ընդ որում, այդ «թարգմանությունը», մեր կարծիքով, կատարվել է ոչ առանց տեղացի հայերի հուշման, որն առաջացել է ավելի ուշ հանդես եկած **Բեռնոս** տարբերակից (< **Բեռնասս**, հմմտ. Ասողիկի պետերբուրգյան հրատարակության «**Բեռնոսս**» աղավաղումը): 19-րդ դ. կեսին տեղի հայերը տեղափոխվել և Կարսագետի ձախափնյակում հիմնել էին նոր գյուղ, որը, ի տարբերություն հնի, կոչվում էր **Հայկական Աղուզում**<sup>14</sup>: Ինչ վերաբերում է Վանանդի (Կարս) **Բեռնային** (**Բերնա**), ապա այն պատմական անվանումը գրեթե անաղարտորեն պահպանած նույնանուն մեկ այլ գյուղ է:

3. **Բուրենց**: Գյուղը հիշատակվում է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում գտնվող **Լմբատավանքի** (Սբ Ստեփաննոս) արձանագրություններից մեկում, որը թողել է Անիի հոգևոր առաջնորդ **Գրիգոր** արքեպիսկոպոս **Պահլավունին** (1215-1227). «Կաման Աստուծոյ ես Տէր **Գրիգոր** որդի **Ապուղանրի**, Անոյ եպիսկոպոս տուի զարդք (= Արդք –

12 Տե՛ս **Ասողիկ**, էջ 80:

13 «Նշխարք սորա (հանգուցան) ի Շիրակ գաւառի ի գիւղն, որ **Բեռնոսս** կոչի, յեկեղեցւոցն, որ Տեառն թագ ասեն» (նույն տեղում): Ի դեպ, Շիրակում առ այսօր հանդիպում է **Բերնեցյան** ազգանունը:

14 Տե՛ս **Աղայան Ա.**, նշվ. աշխ., էջ 119: Ժողովրդական ստուգաբանությամբ՝ գյուղանունը նշանակում է «Ճերմակ խաղող» (թրք. aküzüm), ինչը քիչ հավանական է, քանի որ Շիրակի բնակլիմայական պայմանները խաղողագործության համար անբարենպաստ են: Այս գյուղի անունից է **Աղուզումցյան** ազգանունը:

Գ. Բ.)<sup>15</sup> եւ **գԲուրենոց**<sup>16</sup> երիցուծին **Լմբատայ** իմ հայրենեաց եւ նոքա տարին ա (1) պատարագ ինձ տուին հաստատ պահաւոյք արինին յԱտուծոյ»<sup>17</sup>: Ղ. Ալիշանը ձեռնպահ է մնացել գյուղի տեղադրության վերաբերյալ որևէ կարծիք հայտնելուց՝ այն դասելով նույն վանքի արձանագրություններում հիշատակվող, իր խոսքերով՝ «անծանօթք» բնակավայրերի շարքին (**Ցիցք, Թաղք** են)<sup>18</sup>: Իրականում այս պարագայում ևս գործ ունենք օտարների կողմից հայկական տեղանվան պարզ թարգմանության կամ իմաստավորման հետ: Ընդ որում, կա «Բորենոյ» տարընթերցումը. վերջին տառակապակցությունը **սխալ վերծանության հետևանքով ոց-ի փոխարեն ընթերցվել է ոյ**<sup>19</sup>: Վերջին տարբերակն էլ եկվորների կողմից «հասկացվել» է որպես «բորենու գյուղ» (sic!), որոնք տեղանունը վերածել են **Քյաֆթարլու**-ի (< պրս. کفتار – kaftar – «բորենի», հետնաբար՝ բրբռ. հայիոյական «ծեր, անատամ մարդ»): Խոսքը, ըստ էության, ՀՀ Շիրակի մարզի **Փանիկ** գյուղի մասին՝ (Արթիկ քաղաքից 6-7 կմ հյուսիս): Ի դեպ, գոյություն ունի նաև այս բնակավայրի նշված օտարահունչ անվան ժողովրդական **Զվարճածոր** ստուգաբանությունը<sup>20</sup> (< արլ. թրք. արտասանությամբ՝ Keyfdārāli):

**4. Գինեկ:** Հիշատակվում է **Արջնառձի** վանքի նվիրատու **Պարոնիկի** արձանագրությունում (13-րդ դ.). «...Ետու զիմ գանձագին հողերս զ**Գերմըստու** տնափնիքն առաջի եղէզն **Գինեկոյ** ձանապարհին միջի

15 **Արթիկ** քաղաքի պատմական անունն է: Քաղաքի 7-րդ դ. **Սուրբ Ղևորգ** եկեղեցու պատին **Զաքարե** ամիրսպասալարի որդի **Շահնշահի** 1222 թ. (ՈՒԱ) թողած արձանագրությունում հիշատակվում է «զ**Արդուց**» ձևով (տես «Դիվան հայ վիճագրության» (այսուհետ՝ ԴՀՎ), պրակ X. Շիրակի մարզ, կազմեց **Ս. Գ. Բարխուդարյան**, Եր., 2017, էջ 66: Հմմտ. էջ 71):

16 ԴՀՎ 10-րդ պրակի կազմողները (Գ. Սարգսյան, Ա. Հարությունյան, Կ. Ասատրյան) տեղանունը տալիս են «զ**Տորենոյ**» տարբերակով, թեև, իրենց խոսքերով, չեն «մեկնաբանում» ո՛չ «Բուրենոց»-ը, ո՛չ «Տորենոյ»-ը: Ընդ որում, Ս. Բարխուդարյանը մյուս ուսումնասիրողների (Ս. Զալայանց, Ղ. Ալիշան, Մ. Պետրոսյանց, Հ. Եղիազարյան) նման այն կարդացել է **Բուրենոց** համարելով «հատուկ անուն» (իմա՝ բնակավայր – Գ. Բ.) (տես նույն տեղում, էջ 72): Մեր կարծիքով՝ ճիշտ ձևը, այնուամենայնիվ, **Բուրենոց-ն (Արբենոց)** է, առավել ևս, որ գյուղանվան վերը նշված օտարահունչ տարբերակն իմաստային առումով լիովին համապատասխանում է **Արբենոց-ին** (< Բուրենոց): Ավելացնենք, որ ու > ո անցում նկատելի է **Լմբատավանքի** մեկ այլ արձանագրության մեջ ևս. «...զ**Որբէն** (= **Ուրբեն**) յիշեցեք ի Քրիստոս...» (նույն տեղում, էջ 71: Տես նաև **Մաթևոսյան Կ.**, Անին և անեցիները, Եր., 2020, էջ 410-411):

17 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 96: Հմմտ. **Հակոբյան Թ. Խ.**, Անիի պատմություն, գիրք երկրորդ (1045 թ. մինչև անկումն ու ամայացումը), Եր., 1982, էջ 179-181:

18 Տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 165, ԴՀՎ, պրակ X, էջ 70: Հմմտ. **Եղիազարյան Հ.**, Շիրակի լեռնահովտի պատմական հուշարձանները, Եր., 1975, էջ 33-34: Ըստ Հ. Եղիազարյանի՝ **Ցիցքը** գտնվում էր Լմբատավանքից կես կմ հարավ-արևմուտք՝ Արթիկ-Պեմզաշեն ճանապարհին (տես ԴՀՎ, պրակ X, էջ 69):

19 Տես նույն տեղում, էջ 72:

20 Տես **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Բախշյան Ս. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հատ. 5, Եր., 2001, էջ 233:

եղէզն...»<sup>21</sup>: Ղ. Ալիշանը բնակավայրը նույնացրել է **Սուրբ Էջմիածնից** Շիրակ ճանապարհորդած ճիգվիտ («յիսուսեան») **Վիլլոդի** ուղեգրության մեջ հանդիպող **Գրնրք** գյուղի հետ, որը նշվում է Ախուրյան գետի ձախափնյակում ընկած օտար և վայրահաչ **Չրրփլու** կամ **Չրրփլի** (այժմ՝ **Զրափի**, ՀՀ Շիրակի մարզ) և **Զառինջա** կամ **Զառնջա** (այժմ՝ նույն անունով, ՀՀ Արագածոտնի մարզ) գյուղերի շարքում<sup>22</sup>: Ըստ այդմ, ելնելով տեղանունների արտաքին նմանությունից, մեծանուն հայագետը **Գինեկը** նույնացրել է Ախուրյանի ձախափնյակում ընկած այժմ անբնակ **Կնեկ** (КНЭК) գյուղի հետ (ՀՀ Արմավիրի մարզ)<sup>23</sup>: Իրականում արձանագրության մեջ հիշատակվող բնակավայրը գտնվում էր զգալիորեն հյուսիս՝ նույնանալով Ախուրյանի աջ ափին, ներկայիս Շիրակի մարզի **Աղին** բնակավայրի հանդիպակաց սարավանդում ընկած **Քինակ** գյուղի հետ, որը 20-րդ դ. սկզբին գրեթե անփոփոխ պահել էր հայկական անվանումը (մնացել է Ախուրյանի ջրամբարի տակ): **Գինեկը** (Քինակ) հայաբնակ էր մինչև արևմտահայերի 1829 թ. մեծ գաղթը<sup>24</sup>:

5-8. **Գոռոխունեց, Խաչորիկ, Յամաքծով, Յնդո**: Ի թիվս մի շարք գյուղերի և տարաբնույթ տեղավայրերի (այգիներ, կուղպակներ, փողոցներ ևն)՝ նշված բնակավայրերը հիշատակվում են նշանավոր մեծահարուստ, բարերար **Սմբատորենց Սուլեմի որդի** («որդի Սմբատարենց Սուլեմայ») **Տիգրան Հոնենցի**՝ 1215 թ. Անի քաղաքում՝ **Ծաղկոցաձորի** եզրին կառուցած **Սբ Գրիգոր Լուսավորիչ** հոյակապ եկեղեցու արձանագրությունում<sup>25</sup>: Առ այսօր ուսումնասիրողները ձեռնպահ են մնացել հիշատակվող բնակավայրերի (առնվազն մի մասի) տեղադրությունը ճշտելուց: Մինչդեռ առկա քարտեզագրական

21 Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 123:

22 Տե՛ս նույն տեղում, էջ 168:

23 Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզ D-8: Карт պլանշետ (մասշտաբ՝ 1:5 վերստ, ժամանակակից՝ 1:210000): Ցարական 5-վերստանոց քարտեզի պլանշետները պարբերաբար հրատարակվել են 19-րդ դ. 70-ական թվականներից սկսած մինչև 1940-ական թվականների սկիզբը: Օգտվել ենք Դոնի Ռոստովի քարտեզագրական ֆաբրիկայի 1941 թ. հրատարակությունից: Տե՛ս նաև ԽՍՀՄ ԶՈՒ քարտեզ, K-38-32 պլանշետ (մասշտաբ՝ 1:200000):

24 1829 թ. նոյեմբերի 6-ին անցկացված հաշվառմամբ՝ գյուղում բնակվում էր 30 տուն հայ (տե՛ս **Մուրադյան Հ.**, Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դ. առաջին երեսնամյակին, Եր., 2006, էջ 79):

25 Տե՛ս ԴՀՎ, պրակ I. Անի քաղաք, կազմեց՝ **Հ. Ա. Օրբելի**, Եր., 1966, էջ 63: Հմնտ. **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 76: Հիշվում են նաև՝ **Քարիատ** (ենթադրաբար նույնացրել ենք **Տեկորից** շուրջ 8 կմ հյուսիս-արևելք ընկած ներկայիս **Թաշնիկ** (Դաշնիկ) գյուղի հետ), **Մշակունեց, Կաղուց, Խուզած Մահմունդ** («ի Կարուց երկիրն (իմա՝ Վանանդում – Գ. Բ.)»), **Մորանիս** «խանապարն», **Բեշբենակապ, Ծնակ** ևն:

նյութի քննությունը պարզում է, որ դրանցից մի քանիսը (բացառյալ Հոնենցի արձանագրության մեջ հիշատակվող լավ հայտնի **Երևանը**, **Օշականը** (արձանագրության մեջ՝ «Յոշական»), **Կոշը**, **Արուձը**, **Մրենը**) տեղադրվում են Շիրակի արևմտյան հատվածում՝ հիմնականում **Արջո-առիձ** (այժմ՝ Ալաջա) լեռնագագաթից հյուսիս: Մասնավորապես **Գոռո-խոնեցը** (աղբյուրում՝ «Գառոխոնեց գեղ») նույնանուն է մինչև 1918-1920 թթ. հայկական նկարագիրը պահած **Գյորխասնա** (սակ՝ Գյորխասնա) գյուղի հետ: Տվյալ պարագայում կրկին դիտվում է հայկական տեղանվան օտարալեզու «իմաստավորում»՝ արևելյան թրք. gōrxanā < պրս. گۆرخانه (gūr-xānē), իմա՝ «գերեզմանատուն»:

Հաջորդը՝ **Խաչորիկ** կամ **Խաչորկան** գյուղը («Խաչորկանն հողերն եւ փրնդուկն» բառակապակցության մեջ), մեր կարծիքով, Գոռո-խոնեցից (Գյորխասնա) շուրջ 5 կմ հյուսիս-արևմուտք ընկած ներկայիս բնակավայրն է, որի հայերեն անվանումն օտար մեկնաբանությամբ վերածվել է **Հաջիվալի**-ի (Հաջիվելի)՝ թերևս **Խաչվորիկ** տարբերակից: Տեղորոշվում են նաև **Ցամաթով** և **Ցնդո** բնակավայրերը: **Ցամաթովը** նույնանուն է ներկայիս **Էրիզլեր** (պատմ. **Երգից լեռ**, ավելի մանրամասն տե՛ս ստորև) լեռնագագաթից հյուսիս՝ **Տեկոր** գետի ակունքների մոտ գտնվող **Սուսուզ** կամ **Սուսրզ** գյուղի հետ (թրք. Susuz): Ժամանակակից տեղանունը թուրքերենով ստուգաբանվում է «անջուր, անջրդի», հետնաբար՝ նաև «չոր, ցամաք», և իմաստային առումով կարող է **Ցամաթով**-ի թարգմանությունը դիտվել<sup>26</sup>: 20-րդ դարասկզբին նշված գյուղը վերաբնակեցվել էր եզդիներով և մտնում էր Կարսի մարզի Կաղզվանի շրջանի (օկրուգ) Նախիջևանի տեղամասի մեջ<sup>27</sup>:

Կարծում ենք՝ մի փոքր աղճատումով պահպանվել է նաև **Ցնդո** գյուղանունը (աղբյուրում՝ «Ցընդոյ»): Արջոառիձ (Ալաջա) լեռնագագաթի և Գոռոխոնեց (Գյորխասնա) գյուղի միջև 20-րդ դարասկզբին կար **Ջինդի** (թրք. Cindi, տարբերակ՝ Cinni) տեղավայր, որը, ըստ էության, Տի-

26 «Ցամաթով» նշանակում է «ցամաք (չոր) լիճ»: Ինչպես հայտնի է, «ծով» բառը զրաբարում ուներ նաև «լիճ» իմաստը (իմմտ. **Բզնունյաց** կամ **Վանա ծով**, **Գեղամա ծով**, **Տզրկածով**, **Օովատեղ** (իմա՝ «լճատեղ», նույնանուն գյուղանուններ **Արցախի Վարանդա** և **Վերին Խաչեն-Քարվաճառ** գավառներում), **Վերին Օովեր** (տեղավայր **Կաղզվանի** մոտ՝ մեր անձնական դիտարկմամբ) ևն): Նշենք, որ մեր օրերում էլ վերոհիշյալ գյուղի մոտ (Սուսուզ) կա **մի փոքր լճակ** (տե՛ս ԽՍՀՄ ԶՈՒ քարտեզ, նշվ. պլանշետ):

27 Տե՛ս «Памятная книжка и адрес-календарь Каресской области на 1914 год», «Список населенных пунктов Каресской области на 1-ое января 1913 года», [Карс], էջ XXX:



գրան Հոնենցի արձանագրության մեջ հիշատակվող **Ցնդո** գյուղանվան աղձատված տարբերակն է<sup>28</sup>:

9-11. **Դրաշպետ, Ականց (Ակնաց), Աղբնագեղ**: Այս խմբի բնակավայրերից առաջինը՝ **Դրաշպետը**, հիշվում է Ղևոնդ պատմիչի երկում՝ հայերի 703-705 թթ. հակաարաբական ապստամբության առիթով: 705 թ. Հայաստան մտած բյուզանդական զորքը, որի հրամանատարներից մեկն էր 703 թ. **Վարդանակերտում** (Այրարատ) արաբների պատժիչ զորախումբը ջախջախած և կայսեր կողմից կյուրապաղատի կոչման արժանացած հայոց իշխան **Սմբատ Բյուրատյան Բագրատունին**, ձակատամարտ էր տվել Այրարատի Վանանդ գավառի վերոհիշյալ գյուղի մոտ: Մեծ զոհերի գնով արաբներին հաջողվել էր հաղթանակ տանել, որից հետո **Սմբատ** իշխանը, մեկընդմիջտ հեռանալով հայրենիքից, հաստատվել էր Եգերաց աշխարհի Փոյթ քաղաքում (այժմ՝ Փոթի, Արևմտյան Վրաստանում)<sup>29</sup>: Մեր կարծիքով՝ հիշյալ գյուղանվան առաջին բաղադրիչը՝ դրաշ, նույն «դրոշ» < «դրաւշ» բառն է (< պրս. درفش – dērafš): Միջնադարյան հայ գրականության մեջ դրաւշ > դրաշ անցում չի հանդիպում, քանի որ, որպես կանոն, վաղգրաբարյան **աւ** երկինջունն ավելի ուշ վերածվել է **օ**-ի: Սակայն հայտնի են այդ օրինաչափությունից շեղումներ, որոնցում **աւ**-ը փոխարկվել է ա-ի, այսպես՝ արօտ < արաւտ – արաւծել, «մաւտ» > մօտ – մաւտուցանել, մաւտչիլ, մաւտոյց, յօտել < յաւտել (իմա՝ «կտրել, ծառի ձյուղերը կտրել») – յաւտել, յաւտանել, յաւտումն, յաւտոց (= էտոց)<sup>30</sup>: Ըստ էության, **Դրաշպետ** բառացիորեն նշանակում է «դրոշապետ կամ դրոշակակիր», հետնաբար՝ թերևս նաև «առաջնորդող հրամանատար» (տե՛ս ստորև)<sup>31</sup>: Այս ամենը մեզ թույլ է տվել որոշակի եզրահանգումներ կատարել հարևան Շիրակում գտնվող **Բայրախտար** (Պայրախտար, թրք. Bayraktar) գյուղի անվան առնչությամբ: Վերջինս թուրքերեն նշ-

28 Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզ, նշվ. պլանշետ:

29 Տե՛ս «Պատմություն **Ղեւոնդեայ Մեծի** վարդապետի Հայոց», Ս.-Պետերբուրգ, 1887, էջ 32:

30 Տե՛ս **Աճառեան Հ.**, ՀԱԲ, հատ. Ա, Եր., 1971, էջ 293, 349, հատ. Գ, Եր., 1977, էջ 265-266, 285: Նույն օրինաչափությունն է գործում «գեաղ» («գիղ»-ի տարբերակ) բառի բարբառային «գեաղ» (Համ-շեն) ձևում: Ի դեպ, նույնը նկատվում է պատմական Բարձր Հայքի մի շարք տեղանուններում՝ **Նոր-գյախ, Վերինգյախ, Միսգյախ** < Մեծ+գեաղ են: Կարծում ենք՝ լեզվաբանական նույն կանոնին է ենթարկվել նաև **Գավառի** (Նոր Բայազետ) ենթաբարբառում հանդիպող «կլավնալ» («կազդուրվել, գիրանալ») բառը, որը, անշուշտ, բխում է «կլար» > «կլօր»-ից բառավերջի թ-ի անկումով:

31 Ի դեպ, սկզբնաղբյուրում տեղանունը նշված է «Դրաշպետ» ձևով (ընդգծումը մերն է – Գ. Բ.):

անակում է «դրոշակակիր», նաև «պատերազմ մեկնող ցեղապետ»<sup>32</sup>, ինչն իմաստային առումով համահունչ է **Դրաշպետ**-ին: Կարծում ենք՝ Շիրակում նույնպես եղել է **Դրաշպետ** բնակավայր, որի անվանումն իմաստավորվել և թարգմանվել է եկամուտ թյուրքերի կողմից: Գյուղն ընկած էր Ախուրյանի աջակողմյան **Մավրակ** կամ **Մավրիկ** վտակի միջին հովտում՝ պատմական **Շիրակաշատ** քաղաքից (20-րդ դարասկզբին հորջորջվում էր Աջամ-Մավրակ)<sup>33</sup> շուրջ 4 կմ արևմուտք՝ նույնանուն Վերին (թրք. Baş), Միջին (թրք. Orta) և Ներքին (թրք. Aşağı) **Գեղիկեր** (Քյաղըքլար) գյուղերի հարևանությամբ: Սերետուի երկում այս տեղանքը կոչվում է **Ականից դաշտ**, որտեղ գտնվող **Գետիկ** գյուղի մոտակայքում 606 թ. (ըստ Ղ. Ալիշանի՝ 603 թ.) պարսկական և բյուզանդական բանակների միջև տեղի է ունեցել ճակատամարտ<sup>34</sup>: Ղ. Ալիշանն իրավացիորեն **Գետիկ** տեղանունը կապում է **Գեղիկեր** (Քյաղըքլար) գյուղերի հետ<sup>35</sup>: Անորոշ է միայն, թե որն է սերետույան «մայր» գյուղը: Մեր կարծիքով՝ խոսքը վերաբերում է **Բաշ-Գեղիկերին**, քանի որ թյուրքերեն «baş» բառը, «վերին» իմաստից բացի, ունի նաև «գլխավոր, մեծ» նշանակությունը:

Քննարկվող երկրորդ՝ **Ականից < Ականք** տեղանունը մի քանի անգամ հանդիպում է Հռոմոսի վանքի նվիրատուների թողած արձանագրություններում: Այսպես՝ 1198 թ. (ՈԽԷ) վանահայր **Մխիթարը Սարգիս** կրոնավորի «աստարութեամբ» **Ականց ջուր** գետակից բերված ջրանցքը հասցրել է Հռոմոս: Ուշագրավ է, որ, վանահոր վկայությամբ, նման ծրագիր ունեցել են դեռ Բագրատունի արքաները, ինչը հանգամանքների բերումով չէր իրականացել<sup>36</sup>: Այս եզակի և ուշագրավ

32 Տե՛ս «Турецко-русский словарь», М., 1974, էջ 103:

33 Առաջին անգամ **Շիրակաշատ** ավանը հիշվում է «Աշխարհացոյց»-ում: 591 թ. Հայաստանի երկրորդ բաժանումից հետո այն բյուզանդական Մավրիկիոս (Մորիկ) կայսեր անունով սկսել է կոչվել նաև **Մավրիկոպոլիս**, որի վերիուն է բնակավայրի Աջամ-Մավրակ կամ **Մավրեկ** օտարահունչ անվանումը (տե՛ս «Géographie de Moïse de Corène d'après Ptolémée», Texte Arménien, traduit en français par le P. Arsène Soukry Mékhitariste (գրքում գետեղված է «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրության բնագիրը՝ «Աշխարհացոյց Մովսեսի խորեմացոյ յաւելուածովք նախնեաց» խորագրով), Venise, 1881, էջ 34: Հմմտ. **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 16):

34 Տե՛ս **Սերետու**, Պատմություն, Եր., 2005, էջ 138 (139): Տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն», հատ. II, Եր., 1984, էջ 285: Հմմտ. **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 15:

35 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ.: Կարծում ենք **Զաքարե ամիրսպասալարի՝ Հառիճի** վանքի **Սուրբ Աստվածածին** եկեղեցու հյուսիսային պատին 1201 թ. (ՈԾ) թողած արձանագրության մեջ հիշատակվող **Գետիկն** է, որի «**Պիաղաց**» կոչվող ջրաղացը իշխանը նվիրել էր մենաստանին: Գյուղի հետ հիշվում են նաև Անիի **Գլիճոր** և **Ծաղկոցածոր** տեղավայրերը, ինչն ավելի է ամրապնդում մեր կարծիքը, որ վերոհիշյալ գյուղը գտնվել է Արևմտյան Շիրակում (տե՛ս ԴՀՎ, պրակ X, էջ 45):

36 «...գոր մեր հին թագաւորացն կարի յոյժ ջանացեալ եւ ոչ ժամանեցին բերել:...» (**Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 21-22: Հմմտ. **Թորամանյան**, էջ 182):

տեղեկությունից, ի միջի այլոց, պարզվում է նաև **Մավրակ** գետակի պատմական անունը՝ **Ականց** կամ **Ականից ջուր**, որի ձորահովտի բնակավայրերը, այդ թվում՝ վերոհիշյալ **Դրաշպետը (Բայրախտար)**, մինչև 1918–1920 թթ. պահպանել էին ազգային նկարագիրը: Հռոռմոսի վանքի 13-րդ դ. մի շարք արձանագրություններում հիշատակվում է արդեն **Ականց** գյուղը: Մասնավորապես 1206 թ. (ՈԾԵ) **Զարարե** շահնշահն **Ականցում** (արձանագրության մեջ՝ «յԱկանս», հետևաբար ուղիղ ձևը՝ «Ականք») հրամայել է քանդել մի ջրաղաց, որով վերականգնվել է վանքի ջրամատակարարումն **Ականից ջրից**<sup>37</sup>: Բնակավայրը հիշատակվում է 13-րդ դ. ևս երկու անթվակիր արձանագրություններում: Հատկապես ուշագրավ է 13-րդ դ. սկզբին Անիի հոգևոր առաջնորդ **Գրիգոր** արքեպիսկոպոս **Պահլավունու** կողմից **Ակնաց** (< Ականց–Ականք), **Շավթա** (բնագրում՝ «Շավթա», նաև՝ «Շալթա») և **Աղբնագեղ** գյուղերի ընծայաբերության փաստը՝ իրենց բնակիչներով<sup>38</sup>: Սա ակնհայտորեն ցույց է տալիս, որ Ախուրյանի **Ականց** կամ **Ականից ջուր** վտակն այդպես է կոչվել համանուն գյուղի անունով (նախապես՝ **Ականք**, զարգացած միջնադարում՝ **Ականց** կամ **Ակնաց** [գիւղ])<sup>39</sup>: Սերեռոսի տեղեկությունները թույլ են տալիս վերջինս նույնպես փնտրել **Ականից ջրի** միջին հոսանքում՝ մեր կողմից արդեն հիշված **Գեղիկլեր** գյուղերի շրջանում: Չենք բացառում, որ սկզբնապես հենց դրանցից մեկն էլ կոչվել է **Ականք**, ավելի ուշ՝ **Ականց (Ակնաց)**: Առավել հավանական է այն նույնացնել **Գետիկից** (Բաշ–Գեղիկլեր) փոքր–ինչ հարավ, **Ականից ջրի** աջ ափին գտնվող **Ներքին** (թրք. Aşağı) **Գեղիկլերի** հետ: Ի դեպ, **Ականց**-ի փոխարինումը **Գեղիկլեր**-ով կարող էր կատարված լինել ավելի ուշ՝ բուն **Գետիկից** տեղափոխված բնակիչների կողմից: Ինչ վերաբերում է **Միջին** (թրք. Orta) **Գեղիկլերին**, ապա իրականում այն կարծես Ներքինի մի թաղամասը լինելը՝ ընկած **Ականից ջրի** հանդիպակաց ձախ ափին, հանգամանք, որն էլ հիմք է հանդիսացել

37 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 22: Հմմտ. **Թորամանյան**, էջ 182:

38 «...ետու ի սուրբ Յովանես ընծայ գիր գեղջեիցն գԱկնաց եւ գՇավթայի եւ գԱղբնագեղի գծողովորութիւնն...» (**Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 23: Հմմտ. **Թորամանյան**, էջ 187): Գրեթե նույնանուն մեկ այլ գյուղ (արձանագրության մեջ «Շոթա») հիշատակվում է Արևելյան Շիրակում (այժմ՝ **Նոր կյանք**, «Շիրակի մարզ): Ի դեպ, վերջինիս **Սուրբ Գրիգոր Լուսավորիչ** եկեղեցու պատին **Գագիկ Ա Բագրատունու** թողած արձանագրության մեջ հիշատակվող «Շոմբաքար» գյուղը կարելի է որոշակի վերապահունով նույնացնել հարևան **Վարդաքարի** հետ (տե՛ս ՂԿԿ, պրակ X, էջ 82-83, 86):

39 Նույն անունով բնակավայրեր հանդիպում են նաև Հայաստանի այլ գավառներում, մասնավորապես՝ Սյունիքի **Աղահեճք** գավառի **Ականք** գյուղը (նորագույն ժամանակներում՝ Աղանուս), **Քաջբերունիք** կամ **Արձեշ** գավառի **Ականց** ավանը ևն:

հետագայում վերջինս որպես առանձին բնակավայր դիտարկելու համար:

Խոսենք նաև Գրիգոր Պահլավունու՝ Հոռոմոսին նվիրաբերած 3 գյուղերից **Աղբնագեղի** մասին: Մեր կարծիքով՝ այն համընկնում է **Գրաշպետ** և **Կարմիրվանք**<sup>40</sup> գյուղերի միջև ընկած **Ղրղխլար** (Գրղխլար) գյուղատեղիին: Թուրքերեն «kirik» նշանակում է «ջարդված, կոտրված, ավերված», բայց հետնաբար՝ նաև «հնոտի, թափոն, աղտոտություն»<sup>41</sup>: Ըստ էության, հենց վերջինն էլ հիմք է հանդիսացել **Աղբնագեղի** օտարահունչ անվան առաջացման համար (իմաստով): Ըստ այդմ՝ **Ղրղխլար** կարելի է ստուգաբանել որպես «թափոններ» կամ «աղբանոց»<sup>42</sup>: Ի դեպ, երբեմնի հայկական կյանքի վկայությունն էին դեռ 19-րդ դ. 70-ական թթ. վերջին գյուղատեղիում պահպանված «խաչքարերով» գերեզմանները<sup>43</sup>:

12-15. **Եզնկա(յ), Պորտանգ, Ասմանես («Ասմանէ»)**<sup>44</sup>, **Գողխս (Գողեց կամ Գողենց)**<sup>45</sup>, **Ազատա(յ)**<sup>46</sup>, **Արագեճ**: Հիշատակված են **Վահրամ Պահլավունու**՝ Մարմաշենի հռչակավոր վանքի կառուցման ավարտն ազդարարող 1029 թ. (ՆՀԸ) արձանագրությունում: Ընդ որում, հայրենասեր իշխանն իրենց դաշտերով և հողատարածքներով մենատանին է նվիրաբերել բազմաթիվ գյուղեր ոչ միայն Շիրակում, այլև Արագածոտնում<sup>47</sup>: Շիրակի բնակավայրերի շարքում, բացի առանձնաց-

40 Ըստ Ղ. Ալիշանի՝ համապատասխանում է նշանավոր **Ղարվանքին** (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 15-16, տես նաև ստորև 66-րդ ծանոթագրությունը): Հայաբնակ **Կարմիրվանքը** գտնվում էր **Ղրաշպետից** 2 կմ հյուսիս-արևելք **Ականից ջրի** աջափնյակում:

41 Տես «Турецко-русский словарь», էջ 541:

42 Հմմտ. ոսկեհանքերով հայտնի **Սողք** և **Ծար** (Վերին Խաչեն, այժմ՝ Քարվաճառ) գավառների միասնական **Ջարուզիբիլ** (հյր. «**Ծար ու Տպիլ**») անվանումը (իմա՝ «ոսկեհանքի թափոնների (բառացի՝ աղբի – Գ. Բ.) գավառ»):

43 Տես **Աղամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 116:

44 **Ասմանես**-ը Ղ. Ալիշանի երկում հանդիպում է **Ասմանե** ձևով, որն արտաքնապես նման է (որոշակի հնչյունափոխությամբ) Ջավախքի **Ազմանա** գյուղանվանը (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 148: Հմմտ. **ՂՀՎ**, պրակ X, էջ 94):

45 Հանդիպում է նաև **Գողխս** տարընթերցումը (տես **ՂՀՎ**, պրակ X, էջ 94): Սակայն, մեր կարծիքով, գյուղը նույն **Գողեց** է, որը 1231 թ. (ՈՁ) Հոռոմոսի վանքին են նվիրաբերել **Շերանիկի** որդի **Ասլանը** և նրա տիկինը՝ **Ասուշը** (**Ասուշահ**) (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 20: Հմմտ. **Թորամանյան**, էջ 178): Հետևաբար գյուղի ճիշտ անվանումն է **Գողխս** (իմմտ. **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 122-123. «**Գողենց**»):

46 **Ազատան** հանդիպում է Մարմաշենի վանքի մեկ այլ՝ 1235 թ. (ՈՀԴ) վերանորոգման արձանագրության մեջ, որը թողել են **Վահրամ Պահլավունու** թոռներ տեր **Գրիգոր** արքեպիսկոպոսը և նրա եղբայր **Խարիքը** (Խարիկի/Ղարիբ (?)) (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 150: Հմմտ. **ՂՀՎ**, պրակ X, էջ 95): Ի դեպ, **ՂՀՎ** 10-րդ պրակում տեղանունների ցանկում վերոհիշյալ բոլոր գյուղերը ներկայացված են որպես «ագարակ Բագարանում» (էջ 204-205, 207), ինչը, սակայն, հիմնավորված չէ:

47 «...բայց գտեղի հանգստեանս մերոց առաւել պատուով մեծացուցաք եւ լիացուցաք ամենայն գոյիք լերամբք եւ դաշտաւք աւանդեցաք ի սա գիւղս եւ ագարակս գանձագինս» (**Ալիշան Ղ.**, նշվ.

ված գյուղերից, հիշվում են **Անի** և **Մրեն** քաղաքները, ինչպես նաև **Բագարանն** իր ագարակով («Գագարանի գեղ եւ զիւր ագարակն»), որոնց տեղադրությունը ստույգ հայտնի է<sup>48</sup>: Սակայն մյուս գյուղերի տեղադրության ճշգրտումը բարդանում է նրանով, որ հստակ չէ՝ արդյոք դրանք հիշվում են որոշակի աշխարհագրական հաջորդականությամբ, թե՞ ոչ: Նշենք նաև, որ տեղանունները ժամանակի ընթացքում այնպես են այլափոխվել, որ լուրջ դժվարություններ են առաջանում դրանց՝ ավելի ուշ շրջանի գուգահեռները որոշելիս: Այնուամենայնիվ, ելնելով քարտեզագրական և տեղագրական նյութի ընձեռած հնարավորություններից, գտնում ենք, որ դրանց մեծ մասը հնարավոր է պարզել (անորոշ է միայն արձանագրության մեջ հիշատակվող **Արագեճի** տեղադրությունը տեղեկությունների իսպառ բացակայության պատճառով): Այս շարքում կցանկանայինք առանձնացնել **Եզնկան**, որի անունը կրկին ուղղակիորեն թարգմանվել է եկամուտ թյուրքերի կողմից՝ վերածվելով **Օղուզլու**-ի (տեղացիների բարբառում՝ **Ուղուզլի**): Վերջինս գտնվում էր Անիից շուրջ 20 կմ հյուսիս՝ Ախուրյանի աջափնյակում՝ բազմիցս հիշված **Ականից ջրի** գետահովտում, և հայաբնակ էր մինչև 1918-1920 թթ.: Գյուղի ժամանակակից անունը թուրքերեն նշանակում է «եզան գյուղ» (թրք. oküz – «եզ», նաև «ցուլ», հետնաբար՝ «գռեհիկ, անտաշ, կոպիտ (մարդ)», նաև oğuz – «ցլիկ»), այլ խոսքով՝ **Եզնկա** տեղանունն ուղղակիորեն է ընկալվել օտարների կողմից: Այս տեսանկյունից ուշագրավ է նաև, որ **Կյուրեղ** վարդապետ **Սրապյանը** գյուղի օտարահունչ անվանումը կապում էր **Օղուզլուի** արևելյան հատվածում գտնվող մեծ, կոպտաքար գերեզմանների հետ, որոնք տեղացի հայերը վերագրում էին «ազնավուր»-հսկաների<sup>49</sup>: Ավելացնենք, որ **Եզնկան** (Օղուզլու) նշանավոր էր **Սբ Աստվածածին** (Մայր Աստվածածին) ուշագրավ հորինվածք ունեցող եկեղեցով (երբեմնի վանք), որը, ըստ պահպանված արձանագրության, կառուցվել էր **Խականի** որդի իշխան **Հասան Գնթունու** պատվերով 9-րդ դ. վերջին<sup>50</sup>:

աշխ., էջ 148: Հմմտ. ԴՀՎ, պրակ X, էջ 94): Վանքի շինարարությունը սկսվել է 988 թ. (ՆԼԷ, ըստ Ղ. Ալիշանի՝ 986/ՆԼԵ):

48 Արագածոտնի հիշատակված գյուղերն են՝ **Օշական** («Աշական»), **Դողս**, **Աշտարակ**, **Կարբի** («ի Կարբոյ դաշտի այգի» բառակապակցության մեջ), **Սերկկի** («Սերկեւիէի»), **Վժան** (այժմ՝ Ուզան) (տես նույն տեղերում):

49 Տես **Աղամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 118: Հատկանշական է, որ հայերը նույնպես անտաշ և կոպիտ մարդուն համեմատում են եզի հետ (խոսակցական կոպտախոսություն):

50 Տես **Սարգիսեան Ն.**, Տեղագրությունք ի Փոքր եւ ի Մեծ Հայս, Վեներիկ-Ս. Ղազար, 1864, էջ 174: Հմմտ. **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 15: Եզնկայի մասին հազվագյուտ հուշագրություն է թողել նույն գյու-

Բավական մեծ ճշգրտությամբ են տեղորոշվում նաև **Պորտանգ** և **Ամանես** («Ամանէ») գյուղերը: Առաջինը գտնվել է Ախուրյանի աջակողմյան **Տեկոր** վտակի **Ծփնի** (Ծպնի) օժանդակի ափին ընկած համանուն ավանից շուրջ 2.5–3 կմ արևմուտք՝ **Բարդաքլու** («Պարտագլու», Բարդախլու, թրք. Bardagli) ավերակ բերդի մոտ<sup>51</sup>: Ըստ էության, այն **Պորտանգ**-ի օտարահունչ իմաստավորումն է: **Ամանես** բնակավայրի անունը նույնանուն է **Եղանց սարից** (թրք. Yağlica) հարավ ձգվող **Չինգյանայի** կամ **Ջինգյանայի** ձորում (Չինկյանի ձոր) ընկած **Արզվանի բերդի** անվան հետ<sup>52</sup> (< Ամանէ – Ամանի, որտեղից հետնաբար՝ **Արամանի** > **Արզվանի**. Ի > է հնչյունափոխության համար հմնտ. Լոռէ > Լոռի):

Որոշակի վերապահումով ենք տեղադրել **Գողիս** կամ **Գողեց** (նաև՝ Գողենց) և **Ագատա(յ)** գյուղերը: Մեր կարծիքով՝ **Գողիսը** նույնանուն է Մրենից շուրջ 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Ախուրյանի աջ ափին ընկած **Քեթան** ավերակ գյուղի հետ (թրք. Ketan < բրբռ. Գ(Ք)եթանց անցումով)<sup>53</sup>: Երկրորդը պայմանականորեն տեղադրել ենք **Գողիսից** (Քեթան) 8 կմ հյուսիս՝ նույն գետի աջ ափին գտնվող և մեր օրերում **Ագաջուխ** (ռուս. Азаджух)<sup>54</sup> կոչվող անբնակ գյուղի տեղում: Կարծում ենք՝ օտարահունչ անվանումն առաջացել է թուրքերեն «Azadıcık» տարբերակից<sup>55</sup>:

Փաստորեն՝ Մարմաշենի 1029 թ. արձանագրության մեջ հիշատակվող բոլոր բնակավայրերը գտնվել են Արևմտյան Շիրակի տարածքում:

**16. Երգք**<sup>56</sup> (սկզբնաղբյուրում՝ «զերգա» հայցական հոլովածևով): Բանաստեղծական անունով այս «գանձագին» գյուղը 1201 թ. **Հոռոմոսի վանքին** է նվիրել **Հասանի** որդի **Գրիգոր** իշխանը՝ «վասն արեշատու–

---

դի բնակիչ **Քազրատ Սարգսյանը** (տե՛ս «Հուշագրական ժառանգություն», Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի (RAA) գիտական ուսումնասիրություններ, գիրք ԺԴ, Եր., 2011, էջ 236-248):

51 Տե՛ս **Ադամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 101:

52 Տե՛ս նույն տեղում:

53 Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզ, նշվ. պլանշետ: Հմնտ. ԽՍՀՄ ՋՈՒ քարտեզ, նշվ. պլանշետ:

54 Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզ, նշվ. պլանշետ:

55 Բնակավայրը կոչվում էր նաև **Աղզըաչըխ** (թրք. Ağızacıık) (տե՛ս «Памятная книжка и адрес-календарь Карской области», էջ XXIX: Հմնտ. Թուրքիայի ՋՈՒ ռազմական քարտեզ (մասշտաբ 1:200000), Kars պլանշետ):

56 Հմնտ. Տավուշի **Երգեվանք** բերդ:

թեան» իր գավակ **Ամիր Հասանի**<sup>57</sup>: Մեր կարծիքով՝ տեղանունը օտար ինաստավորմամբ պահպանել է Ախուրյանի Տեկոր վտակի ակունքների մոտ բարձրացող **Էքիզեր** լեռնագագաթը (թրք. ikiz, բրբռ. ekiz – «երկվորյակ»)<sup>58</sup>: Վերջինս, ամենայն հավանականությամբ, առաջացել է նախնական **Երգից Լեռ** հայկական տեղանվան աղճատումով: Ընդ որում, նույն լեռան արևելյան ստորոտին գտնվում է **Հասանջան** գյուղատեղին<sup>59</sup>, որը հիշեցնում է վերոհիշյալ ազնվականների անունները: Ըստ էության, դա հենց **Հոռոմոսին** նվիրաբերված **Երգքն** է, որը եկամուտ թյուրքերը վերանվանել են **Հասանի գյուղ**: Ուշագրավ է, սակայն, որ մոտակա **Էքիզեր** լեռնագագաթը, թեև թեթև աղճատումով, այնուամենայնիվ պահել է գյուղի բուն անվանումը: Ի դեպ, բնակավայրը տիրոջ անունով վերանվանելու լավ օրինակ է **Կիրակոս Գանձակեցու** «Հայոց պատմության» մեջ հիշվող **Վարդենիսը**, որը գտնվում էր Արագածոտն և Նիգ գավառների սահմանագլխին: Որպես **Քուրդ Վաչուտյան** իշխանի տիրույթ՝ այն ուշ միջնադարում օտարների կողմից հորջորջվել էր **Քուրդալի** (Քուրտալի, այժմ՝ ՀՀ Արագածոտնի մարզ, անբնակ)<sup>60</sup>:

17. **Ջու**: Հիշատակվում է 13-րդ դ. 1-ին տասնամյակներին (մինչև 12-36 թ.) անեցի **Քոթիթ ձոնի** և նրա տիկնոջ՝ **Շահմամի**, Հոռոմոսի նվիրատվական արձանագրությունում. «...կաման Աստուծոյ եւ **Քոթիթ ձոնս** եւ կենակից իմ **Շահմամս** տուաք **Ջուի** դանկն իւր հողովն եւ ջրովն ոնց բնական լեալ է ի **Սուրբ Յովաննէս**...»<sup>61</sup>: Ղ. Ալիշանը, հիմք ընդունելով **Ծփնի** (Ծպնի) ավանի օտարահունչ **Ջունի** (**Ջիվնի**) զուտ անվանումների արտաքին նմանությամբ **Ջուն** ենթադրաբար նույնացրել է նշված բնակավայրի հետ<sup>62</sup>: Սակայն **հայկական Ծփնի տեղանունը** օտար և աղճատված ձևի հետ կապելու այս տեսակետն ընդուն-

57 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 23, **Թորամանյան**, էջ 186: Տե՛ս նաև **Կարապետյան Ա.**, Հոռոմոսի վանական համալիրի վիճագրական ժառանգությունը, «Վարձք», Եր., 2021, N 15, էջ 14-15:

58 Ի դեպ, Կարնո բարբառում (Ախալցխա-Ջավախքի խոսվածք) «ekiz» տարբերակից այժմ էլ գործածելի է «էքիզ» («երկվորյակ») բառը:

59 Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզ, նշվ. պլանշետ: 1913 թ. այն 115 «ժամանակավոր» բնակիչներով (առանց ազգությունը նշելու) գյուղակ էր (տե՛ս «Памятная книжка и адрес-календарь Карсской области», էջ XXX):

60 Ավելի մանրամասն տե՛ս **Սիմեոն Կաթողիկոս Երևանցի**, Ջամբռ, Եր., 2003, էջ 538 («Ծանոթագրություններ» բաժնում):

61 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 21, **Թորամանյան**, էջ 179: Հմմտ. **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 431:

62 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 21, 33, 135: Ի դեպ, հանդիպում է նաև գյուղանվան «Չրու» օտարահունչ տարբերակը (տե՛ս Թուրքիայի ՋՈՒ ռազմական քարտեզ, նշվ. պլանշետ):

ելի չէ<sup>63</sup>: Ստորև ներկայացնում ենք մեր տեսակետը հարցի մասին՝ բոլորովին այն չհամարելով սպառիչ և վերջնական: Կարծում ենք, որ վերոհիշյալ գյուղը կարող էր կոչվել նաև **Զուվան** (Զու+աւան > Զու+ւան), իսկ ավելի ուշ հորջորջվել է օտարահունչ **Սուվանվերդի** կամ **Սվանվերդի** անունով (թրք. *Suvanverdi*, նաև *Suğanverdi*)<sup>64</sup>: Ըստ այդմ՝ **Զուն** նույնանուն է ՀՀ ներկայիս Շիրակի մարզի **Լուսաղբյուր** գյուղի հետ (Ախուրյանի ձախ ափին գտնվող **Իսահակյան** (Ղազարապատ) բնակավայրից 2 կմ հյուսիս-արևելք)<sup>65</sup>:

18-19. **Կարմնջածորի վանք** և **Քեղարագոմ**: Շիրակի **Կարմնջածորի** (< **Կամրջածոր**) վանքը հիշատակվում է միայն Վարդան Արևելցու «Աշխարհացոյց»-ում՝ գավառի **Հոռոմոս**, **Մարմաշեն** (Արևելցու աշխատության մեջ՝ «Մարմարաշեն»), **Դպրավանք** (Դպրեվանք)<sup>66</sup> և **Հառիճ** հոգևոր-մշակութային կենտրոնների շարքում, ինչն ինքնին խոսում է սրբավայրի 13-րդ դ. ունեցած դերի և կարևորության մասին<sup>67</sup>: Նույն տեղանունը, միայն թե չնչին տարբերությամբ, հանդիպում է Հոռոմոսի վանքի 12-13-րդ դդ. նվիրատվական արձանագրություններում: Այսպես՝ **Գողոյի** թոռ **Պարոնը** («թոռն Գողոյն») **Կամրջիծորում** գտնվող ջրաղացի կեսը նվիրել է Հոռոմոսին **Մաշկակապի** (<Մշակակապ (?), ամենայն հավանականությամբ՝ գյուղ) հետ<sup>68</sup>: Իսկ 1234 թ. (ՈԶԳ) **Զնրուխթ** խաթունը («կին Սնրատի») մենաստանին է նվիրել «**Աբելեանց**» ջրաղացը «ի **Կարմնջին ձորին**»<sup>69</sup>: Հարց է ծագում՝ որն է Արևելցու՝ խոսակցական ձևով հիշատակած

63 Տարօրինակ կերպով **Ծփնին** չի հիշատակվում և ոչ մի սկզբնաղբյուրում, այդ թվում՝ վիմագիր արձանագրություններում:

64 Տե՛ս Ռուսական 5-վերստանոց քարտեզ, նշվ. պլանշետ (*Суванверды*): Ղ. Ալիշանը նշում է նաև «Սուֆանվերտի» տարբերակը (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 167):

65 Ինչ վերաբերում է թրքահունչ տեղանվան երկրորդ՝ «verdi» բաղադրիչին (թուրքերեն նշանակում է «տված», «նվիրած», հմմտ. *Allahverdi* – «Աստծո տված»), ապա դա թերևս հայերեն «բերդ» բառի սովորական իմաստավորումն է: Ըստ երևոյթին, տեղացիները մոտակա ամրության կամ «բերդի» պատճառով գյուղը կոչել են նաև **Զուվան բերդ**, որն էլ օտարները, իրենց լեզվի հանգույն, «ստուգաբանել են» տեղանունը վերածելով **Սուվանվերդի**-ի:

66 **Գյումրիի** (Կումայրի) վաղմիջնադարյան եկեղեցին է («**Կումայրիի եկեղեցի**»), որն ուշ միջնադարում վերածվել է ամրոցի (տես ՂՀՎ, պրակ X, էջ 13):

67 Տե՛ս «Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**», քննական հրատարակություն Հայկ Պերպերեանի, Բարիզ, 1960, էջ 15: Ընդ որում, Արևելցու երկում առանձին նշվում է նաև Շիրակի հարավային անմիջական հարևան **Արշարունիք (Շրախածոր)** գավառի նույնանուն նշանավոր հոգևոր կենտրոնի Կամրջածորի («Կարմնջածորն») մասին (տես նույն տեղում): Վերջինս Ասողիկը կոչում է «մեծահռչակ ուխտն **Կամրջածորի ի գաւառին Արշարունեաց** (ընդգծումը մերն – Գ. Բ.)» (Ասողիկ, էջ 173):

68 Տե՛ս **Կարապետյան Ա.**, Հոռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, էջ 7:

69 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 24: Հմմտ. **Թորամանյան**, էջ 191, **Կարապետյան Ա.**, Հոռոմոսի վանական համալիրի վիմագրական ժառանգությունը, էջ 11:



**Կարմնջաձորը**, որի անունով էլ կոչվում էր վերոհիշյալ վանքը: Ուսումնասիրությունից ելնելով՝ կարծում ենք, որ 13-րդ դ. այս անունն էր կրում պատմական Ախուրյանի միջին հոսանքը<sup>70</sup>, ավելի ստույգ՝ ՀՀ Շիրակի մարզի **Աղին** գյուղի արևմուտքով Անիի ուղղությամբ հոսող հունը: Ինչպես հայտնի է, նշված հատվածում գտնվող **Ջրափի** զույգ (Վերին և Ներքին) գյուղերի մերձակայքում մինչև 1970-ական թթ. կեսերը պահպանվել էին 10-11-րդ դարերով թվագրվող ավերակ կամուրջներ և քարավանատուն, որոնցով ժամանակին Անի է ընթացել միջազգային տարանցիկ ճանապարհը<sup>71</sup>: Այս փաստն էլ ավելի է հիմնավորում մեր տեսակետը: Ի դեպ, **Վարդան Արևելցին** Ախուրյանի՝ Անիի հարևանությամբ ձգվող հատվածը կոչում է **Չորոգետ**, որը, մեր կարծիքով, **Կարմնջաձոր գետ**-ի կրճատ ձևն է<sup>72</sup>: Եղած փաստերը թույլ են տվել Արևելցու հիշատակած **Կարմնջաձորի վանքը** տեղադրել Անիից շուրջ 10 կմ հյուսիս-արևմուտք՝ Ախուրյանի աջ (արևմտյան) ափին՝ ՀՀ Շիրակի մարզի **Հայկաձոր** գյուղի (Ջրափիից հարավ) և **Հոռոմոսի** վանքի միջև սեպածև մտնող թերակղզու վրա գտնվող **Տայլար** (Տայիլեր) գյուղատեղի շրջանում: Ընդ որում, սրբավայրը տեղակայված է թերակղզու հյուսիսարևմտյան մասում՝ գետի ափին<sup>73</sup>: Վերջինիս մասին բավական ընդարձակ խոսում է Ղ. Ալիշանը, որի հաղորդմամբ՝ Տայլարում «**միակ նշանակ մնայ եկեղեցին հնաշէն միջակ մեծութեամբ, ...կաթողիկէի և կրկնահարկ աւանդատամբք առ խորանան երկուստէք** (ընդգծումը մերն է – Գ. Բ.)»<sup>74</sup>: 1840-ական թթ. Շիրակի տարածքով ճանապարհորդած **Ս. Զալայանցը** եկեղեցին անվանում է «**եօթնախորան**»<sup>75</sup>, ինչը վկա-

70 Ինչպես արդեն նշել ենք, հնում Ախուրյանը հիմնականում համապատասխանել է ներկայիս Կարապետին:

71 Տե՛ս **Սարգիսեան Ն.**, նշվ. աշխ., էջ 221-222, **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 167-168, **Եղիազարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 52-53: Նշված բնակավայրերը վերոհիշյալ հուշարձանների հետ Ախուրյանի ջրամբարի կառուցման հետևանքով ջրի տակ են մնացել:

72 «**Չորոգետ** Անի է (ընդգծումը մերն է – Գ. Բ.) («Աշխարհացոյց **Վարդանայ վարդապետի**», էջ 15): Ընդ որում, կարելի է ենթադրել, որ քաղաքի մոտ **Կարմնջաձորի** հատվածը կոչվում էր նաև **Անի**: Ընդհանրապես գետերին հատուկ է հունի առանձին մասերում տարբեր անվանումներ ունենալը: Այսպես՝ Անիից հարավ գտնվող նշանավոր **Մաղաքերդ-Օառաքարի** շրջանում Ախուրյանի հունը հնում հայտնի էր **խորհա գետ** անունով (տեղեկությունը ըստ կարծեցյալ Շապուհ Բագրատունու) (տե՛ս **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 174):

73 Անի չհասած Ախուրյանի ոլորանները գոյացնում են երկու թերակղզի: Դրանցից հարավայինի վրա է **Հոռոմոսը**: Հյուսիսայինում, որը վերջինից ուղիղ գծով հեռու է 2 կմ, 20-րդ դ. սկզբին գտնվում էին մենաստանի կավածոթները, ինչպես նաև վերոհիշյալ եկեղեցու և **Տայլար** գյուղի ավերակները: Ընդ որում, Տայլար գյուղատեղին ընկած է եկեղեցուց շուրջ 2 կմ հարավ (տե՛ս ԽՍՀՄ ԶՈՒ ռազմական քարտեզի K-38-32 պլանշետ (մասշտաբ 1:200000)):

74 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 17:

75 Տե՛ս **Զալայեանց Ս.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփլիսի, 1858, էջ 26:

յում է, որ վերջինս ժամանակին եղել է հոգևոր խոշոր կենտրոն: Նույն հեղինակի տվյալներով՝ եկեղեցու հյուսիսային պատին պահպանվել էին 13-րդ դ. արձանագրություններ<sup>76</sup>: Հարցը վերջնակա-նապես պարզվում է **Կյուրեղ** վարդապետ **Սրապյանի** տեղեկու-թյուններով, որոնց համաձայն՝ **Կարմնջաձորի** (Ախուրյանի նշված հատվածը) կիրճի եզրին կառուցված վերոհիշյալ եկեղեցին կոչվում էր **Սուրբ Հարություն** և նախկինում եղել է վանք<sup>77</sup>: Ավելին՝ Ղ. Ալի-շանի տվյալները մեզ բերել են այն եզրակացության, որ **Տայլարը** (Տայիլեր) նույն **Քեղարագոմ** բերդավանն է, որը 11-րդ դ. սկզբին պաշտպանական նպատակներով մենաստանին էր նվիրել շահնշահ **Գագիկ Ա Բագրատունին** (990–1020): Այդ մասին գրանցված է Հո-ռոմոսի վանահայր **Անանիայի** 1013 թ. արձանագրության մեջ. «...վասն **ապաւինի տեղի լինելոյ ի փախստեան ժամանակի եւ այլ բազում ինչ աւգտի փայտի եւ խոտի...** (ընդգծումը մերն է – Գ. Բ.)»<sup>78</sup>: Դրա համար տեղանքը խիստ նպաստավոր է, քանի որ վե-րոհիշյալ թերակղզին երեք կողմերից պաշտպանված է **Կարմնջա-ձորի** (Ախուրյան) կիրճի դժվարամատչելի բարձրադիր ժայռերով, իսկ ցամաքից (հյուսիս–արևմուտքում) անջրպետված էր գետի երկու ափերն իրար միացնող պարսպաշարով, որը, ամենայն հավանա-կանությամբ, կառուցվել էր **Գագիկ Ա**-ի օրոք<sup>79</sup>: Փաստորեն, վտան-գի ժամանակ Հոռոմոսի միաբանները, թերևս նաև շրջակա գյու-ղերի բնակիչները, ապաստանում էին լավ պաշտպանված, ան-մատչելի **Քեղարագոմում** և հարակից տարածքում, որի մեջ էր ներ-առված նաև **Կարմնջաձորի վանքը**: **Քեղարագոմը**<sup>80</sup> (հետագայում՝ Տայլար) իր գոյությունը պահպանել է մինչև 19-րդ դ. սկիզբը, երբ

76 Դրանց ընդօրինակությունները տես նույն տեղում, էջ 26-30:

77 Տես **Աղամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 116:

78 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 32-33, **Թրամանյան**, էջ 170: Տես նաև **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 114, 171-172:

79 Ղ. Ալիշանը գրում է հետևյալը. «...**խապառ կղզիացուցեալ է ձեռն մարդկան՝ քաղաքործով և դրամք պարսպեալ գբովանդակ ցամաքաբերանն, որ է ի հիսիսային կողմն, յանդորութիւն շինին** (= Տայլարին) **պարփակելոյ ի սնին... և հարկ է թէ կարևոր և ամուր ինն տեղի էր յառաջագոյն...** (ընդգծումը մերն է – Գ. Բ.)» (**Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 17: Հմմտ. **Աղամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 116):

80 Երևակում դարձյալ հանդիպում են **գոմ**-ով (օտար արտասանությամբ՝ **քոմ**) կազմված տեղանուն-ներ (տես մասնավորապես **Ջողքագոմի** հատվածը սույն հոդվածում): Նշենք, որ Ախուրյանի աջ-ափնյակում **Ալաման** լեռնագագաթից արևելք, տեղակայված էին **Բայրամքոմ** և **Վայսքոմ** աղճատ-ված տեղանուններով այլազգաբնակ գյուղերը (այժմ 2-ն էլ լքված և անբնակ են): Իրականում դրանք նախապես հնչել են համապատասխանաբար **Վահրամ(ա)գոմ** և **Վայսգոմ** (հմմտ. **Վայս** բերդ (< Վայք) **Վայոց** ձորի գավառում (տես **Հարությունյան Բ.**, «Վայոց ձոր» տեղանվան ստուգաբանու-թյան հարցի շուրջ, «Լրաբեր» հաս. գիտ., Եր., 1967, N 9)):

լեզգիների պարբերաբար կրկնվող ավերիչ ասպատակությունների հետևանքով լքվել է բնակիչների կողմից և ամայացել, որոնք հեռացել են **Արարատյան դաշտ** (ըստ Ղ. Ալիշանի՝ «ի սահմանս Երևանայ») և **Գեղարքունիք**<sup>81</sup>: Ի դեպ, **Քեղարագոմի** թերակղզու հանդիպակաց օֆիսն առ այսօր կանգուն է **Սամեհան** ճարտարապետի՝ 985 թ. (ՆԼԴ) կառուցած **Սուրբ Գրիգոր Լուսավորիչ** վանքը (**Կարմիր վանք**, այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի **Հայկաձոր** գյուղում)<sup>82</sup>: Այսպիսով՝ Ախուրյանի միջին ավազանը՝ **Կարմնջաձորը** (< Կամրջաձոր), 11-13-րդ դդ. եղել է մշակութային զարգացած կենտրոն, որտեղ կողք կողքի գործել են նշանավոր **Հոռոմոս (Սուրբ Հովհաննես)**, **Կարմնջաձորի Սուրբ Հարություն** և **Սուրբ Գրիգոր Լուսավորիչ (Կարմիր վանք)** մենաստանները:

20. **Մարաց մարզ**: Տեղանունը հանդիպում է Մովսես Խորենացու երկում՝ Ք. ա. 3-րդ դ. վերջի իրադարձությունների առնչությամբ: Ինչպես հայտնի է, Արտաշեսի և Երվանդ Դ Վերջինի միջև հակամարտությունը, ի վերջո վերածվելով գահակալական լուրջ պատերազմի, ավարտվեց Շիրակի տարածքում տեղի ունեցած մեծ ճակատամարտով: Պատմահոր հաղորդմամբ՝ Երվանդ Դ-ի զորակայանը ճակատամարտի նախօրյակին տեղակայված է եղել Ախուրյանի և Երասխի խառնարանի մոտ կառուցված **Երվանդաշատ** (Մարմետ) մայրաքաղաքից «աւելի քան 300 ասպարիսաւ (շուրջ 95-96 կմ – Գ. Բ.) ի հիւսիսոյ, ի վերոյ գետոյն Ախուրեան»<sup>83</sup>: Ճակատամարտից հետո հաղթանակ տարած Արտաշեսն առընթեր հովիտը կոչեց **Մարաց մարզ**, քանի որ, ինչպես նշում է Խորենացին, «մարերի» գորքը (իմա՝ Արտաշեսի բանակը)<sup>83</sup> ճամբար էր խփել զոհվածների դիակների վրա<sup>84</sup>: Զարգացած միջնադարում **Մարաց մարզը**՝ որպես բնակավայր, հիշատակվում է Հոռոմոսի վանքի նվիրատուների արձանագրություններում: Մասնավորապես հայտնի է **Իգնատիոսի** և նրա կնոջ՝ **Մամերի**՝ մենաստանի տնօրինությանն իրենց «հայրենիք» **Մարաց մարզ**–

81 Տե՛ս **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 17: Լեզգիների ասպատակությունների և վայրագությունների մասին տե՛ս **Ինձիճեան Ղ.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Մասն առաջին: Ասիա, հատ. Ա, Վենետիկ-Սուրբ Ղազար, 1806, էջ 121:

82 Տե՛ս **Զայլեանց Ա.**, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տիփսիս, 1842, էջ 222-223: Հմմտ. **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 169, **Եղիազարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 51-52:

83 Ինչպես հայտնի է, Երվանդ Դ-ն Արտաշեսին հանիրավի անվանում էր «մար»՝ կասկածի տակ դնելով հայոց գահի նկատմամբ նրա իրավունքների օրինականությունը:

84 Տե՛ս **Մովսես Խորենացի**, նշվ. աշխ., էջ 204 (205):

ի «կէս դանկն» հանձնելու մասին<sup>85</sup>: 1201 թ. (ՈԾ) **Խաչեղբայրը** իր որդու՝ **Ավետիսի** հետ Հոռոմոսի վանքին է նվիրել նույն գյուղը («**Մարանց մարգիկ**»)՝ այն նույնպես կոչելով «զմեր հայրենիք»<sup>86</sup>: Ղ. Ալիշանը, հիմք ընդունելով Պատմահոր տվյալները, վերոհիշյալ բնակավայրը տեղադրում է «ի միջոցի անդ **Մարիկայ** գետին (իմա՝ **Ականից ջուր**. տես վերը – Գ. Բ.) և **Ախուրենոյ**»<sup>87</sup>: Ըստ էության, մեծանուն հայագետը **Մարաց մարգը** տեղադրում է պատմական **Շիրակաշատ** քաղաքի (ինչպես արդեն նշել ենք, ավելի ուշ այն հայտնի էր Աջամ-Մավրակ օտարահունչ անունով) շրջանում՝ **Կարսագետի** և **Ախուրյանի** ջրկիցից փոքր-ինչ արևմուտք: Լրացնելով Ղ. Ալիշանին՝ ավելացնենք, որ **Մարաց մարգ** տեղանունը դարձյալ թարգմանվել է ուշ միջնադարում Շիրակ թափանցած թյուրք քոչվորների կողմից՝ նրանց բերանում դառնալով **Իլանլու** (թրք. yılanlı – «օձի գյուղ կամ օձուտ»): Ամենայն հավանականությամբ, տեղանվան առաջին բաղադրիչը՝ **մարաց**-ը<sup>88</sup>, նրանց կողմից բխեցվելով պարսկերեն ماز – mār – «օձ» բառից, կրկնակի թարգմանությամբ դարձել է **Իլանլու**: **Մարաց մարգը** (Իլանլու) գտնվում էր Շիրակաշատից շուրջ 5 կմ արևելք և այժմ ծածկված է Ախուրյանի ջրամբարի ջրերով: Ի դեպ, վերջինից շուրջ 4.5 կմ արևելք գտնվում էր **Խովանդ Ամիրսուլտանի**՝ Հոռոմոսում 1207 թ. (ՈԿԶ) թողած արձանագրության մեջ հիշվող **Աստեղանին**, որը, փոքր-ինչ աղավաղվելով, 20-րդ դ. սկզբին հնչում էր Աստախանա (այժմ՝ նույնպես ջրասույզ)<sup>89</sup>:

21. **Որմտանի (Որոմանի)**: Հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին 10-րդ դարասկզբի իրադարձությունների առնչությամբ: Ուտիքի Մովսես իշխանի դավադրության ճնշումից հետո **Աշոտ արքայորդին** (Աշոտ Բ Երկաթ, 914-928) վերադարձել է Շիրակ, որի վերոհիշյալ գյուղում նրան դիմավորել են եղբայրը՝ իշխանաց իշխան **Աբասը**, և աները՝ վրաց **Գուրգեն** իշխանը<sup>90</sup>: Մրանով էլ սահման-

85 Տես Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 21: Հմմտ. **Թորամանյան**, էջ 180:

86 Տես Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 23: Հմմտ. **Թորամանյան**, էջ 186:

87 Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 33:

88 Չի բացառվում, որ ժամանակի ընթացքում գյուղանունը կրճատվելով հնչում էր ուղղակի **Մարաց** կամ **Մարանց**:

89 Տես նույն տեղում: Հմմտ. **Թորամանյան**, էջ 187: Աստեղանին (Աստախանա) հայաբնակ էր մինչև 1830-ական թթ. (տես **Մուրադյան Հ.**, նշվ. աշխ., էջ 79):

90 Տես **Հովհաննես** կաթողիկոս **Ղրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 304 (305):

ափակվում են մեր տեղեկություններն այս բնակավայրի մասին<sup>91</sup>: Այնուամենայնիվ, հակված ենք կարծելու, որ խոսքը Ախուրյանի ձախակողմյան **Գեղաձոր** կամ **Գունջաջուր** (Ջանուշ-ջուր) վտակի ափին գտնվող **Հոռոմ** գյուղի (Արթիկ քաղաքից շուրջ 7 կմ հյուսիս-արևմուտք) մասին է: Ժամանակի ընթացքում վերոհիշյալ գյուղանունը, հնչելով **Հորմտանի** կամ **Հորոմանի** (Հոռոմանի), տեղացիների կողմից իմաստավորվել և ստացել է ժամանակակից անվանումը՝ կապվելով **Հոռոմ**-ի (Հոռոմ) հետ: Ուշագրավ է, որ նմանատիպ երևույթ հանդիպել է նաև մեր օրերում, երբ գյուղի մուտքի մոտ գտնվող ցուցանակի գրությունը, ոչ առանց տեղացիների միջամտության, վերածվել է **Հոռոմ**-ի: Իրականում **Որմտանի**-ն (**Որոմանի**) ոչ մի առնչություն չունի **Հոռոմ** տեղանվան հետ: Համոզված ենք, որ այն ստուգաբանվում է հայերեն «որմն» («պատ»), հետնաբար՝ «պարսպաշար» բառով: **Հոռոմը** հայտնի է իր հնագույն ամրոց-քաղաքատեղիով<sup>92</sup>, որի հզոր պարսպաշարից էլ ծագել է միջնադարյան գյուղանունը: Ըստ այդմ՝ **Որմտանի** (**Որոմանի**) նշանակում է «պատեր» կամ «պարսպաշար» (նկատի առնենք մանավանդ -տանի կամ -անի հոգնակիակերտ վերջածանցները):

22-23. **Ջողբագոմ (ձողբագոն), Խաչով փարախ:** Առաջինը երկու անգամ հանդիպում է Հոռոմոսի վանքի արձանագրություններում: 1280 թ. (2ԻԹ) ընծայագիր է թողել Տիգրան Հոնենցի թոռնուհին. «...կաման Աստուծոյ ես **Մամբաս** դուստր **Աղաւին** եւ թոռն **Տիգրանայ** ետու զիմ հայրենի բաժինք գեղն **զձոխքագոն** ի **սուրբ Յովանէս...**»<sup>93</sup>: Երկրորդը **Ջաքարե** ամիրսպասալարի որդի **Շահնշահի** թոռ **Վահրամ աթաբեկի** («Վարհամ աթապակ») 1336 թ. (2ՁԵ) արձա-

91 Վերոնշյալ տարբերակներից զատ՝ հանդիպում են նաև գյուղանվան **Որմտնի** և **Որոմանի** աղավաղված տարբերակները (տես նույն տեղում: Հմմտ. **Ինձիձեան Ղ.**, Ստորագրութիւն Հին Հայաստանեայց: Մեծ Հայք, Վեներտիկ-Ս. Ղազար, 1822, էջ 429): Դրասխանակերտցու երկի հրատարակիչ Գ. Թոսունյանը «Շամոթագրություններում», նախապատվությունը տալով տեղանվան **Որոմանի** (Որմանի) տարրնթերցումին, գյուղը նույնացրել է, ինչպես ինքն է նշում, Շիրակի Արմանի բնակավայրի հետ (?) (տես **Հովհաննես** կաթողիկոս **Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 378): Ակնհայտ է, թե ինչ նկատառումներով է Գ. Թոսունյանը, բնակավայրի անվանումն աղավաղելով, այն «տեղադրել» Շիրակում, որտեղ նման գյուղ չի հիշատակվում: Իսկ եթե խոսքը վերաբերում է Ղազար Փարպեցու երկում հանդիպող **Արամանային**, ապա վերջինս գտնվել է «մերձակայ **սահմանակից Բասնոյ** և **Տուարծատալու**: (ընդգծումը մերն է – Գ. Բ.)», այսինքն՝ **Այրարատ** և **Տուրուբերան** աշխարհների սահմանագլխին (տես **Ղազար Փարպեցի**, Հայոց պատմություն: Թուրք Վահան Մամիկոնյանին, Եր., 1982, էջ 132 (133)):

92 Տես **Եղիազարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 41-43:

93 **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 28: Հմմտ. **Թրամանյան**, էջ 202:

նագրությունն է, որը, ի դեպ, պարունակում է ուշագրավ մանրամասներ: Այսպես, նվիրատուն մենաստանին է նվիրել **Գանձահանք** («զԳանձայհանք») և **Զողքագոմ** («զԶողքայգոմն») գյուղերը «իրենց հանդայվարաւքն հողով եւ ջրով ու դ (4) կոբարովն»<sup>94</sup>: Այստեղ հատկապես կարևոր է վանքին նվիրաբերված հողատարածքների սահմանների-«կոբար»հիշատակումը: Անհրաժեշտ է առանձնացնել արևելյան սահմանը, որն անցնում էր **Մաստարա** ավանից Շիրակ տանող մայրուղով («մեծ շահրոէն Մասթարոյ»)<sup>95</sup>, ինչը պարզորոշ ցույց է տալիս, որ նշված բնակավայրերը գտնվել են Շիրակի արևելյան մասում, հանգամանք, որը, ի դեպ, շեշտում է նաև Ղ. Ալիշանը: Ընդ որում, մեծանուն հայագետի կարծիքով, վերոհիշյալ բնակավայրերը պետք է տեղակայված լինեին Հոռոմոսից ոչ շատ հեռու՝ Մաստարայի արևմտյան կողմում<sup>96</sup>: Ընդունելով հանդերձ Ղ. Ալիշանի տեսակետը՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ նշված գյուղերը պետք է փնտրել ոչ թե Հոռոմոսի մերձակայքում, այլ զգալիորեն հյուսիսում: Մեր կարծիքով, **Զողքագոմ** կամ **Ճոխքագոմ**<sup>97</sup> բնակավայրը տեղակայված է եղել Մաստարայով ձգվող և մեր օրերում էլ ռազմավարական մեծ նշանակությունը պահած Երևան-Գյումրի (Կումայրի) մայրուղու եզրին գտնվող ՀՀ Շիրակի մարզի **Բենիամին** գյուղի մոտ, գուցե վերջինիս տեղում: Օտար տիրապետության շրջանում գյուղը վերանվանվել էր **Զլովխան**, ինչը տեղացի հայերի շրջանում հնչել է **Ճլոխան**<sup>98</sup>: Վերջինս, ամենայն հավանականությամբ, առաջացել է պարսկերեն «جلوخان» (jēlōv-ē xān) «իջևանատան (խան) դիմաց» բառակապակցությունից, որը, կարծում ենք, իր հերթին առաջ է եկել **Զողքագոմ**-ի **Զողքա** կրճատ ձևից: Չենք բացառում, որ վերջինս հնչել է նաև **Զոլքան** կամ **Զոլխան** (թաթարերենի ազդեցություն): Ամենևին էլ վերջնական չհամարելով մեր տեսակետը՝ կարծում ենք, որ

94 Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 28: Հմմտ. Թորամանյան, էջ 174: Արձանագրության նորոպի ընթերցումը տես **Վարապետյան Ս.**, Հոռոմոսի վանական համալիրի վիճագրական ժառանգությունը, էջ 5:

95 Պրս. شاهراه – šāhrāh – «արքունի ճանապարհ, մեծ պողոտա», նաև «մայրուղի, մեծ կամ գլխավոր ճանապարհ»: (տես «Բառարան պարսկերէն-հայերէն», կազմեց **Գարեգին քահ. Յ. Կիրակոսեան**, Զուղա-Սպահան, 1933, էջ 342: Հմմտ. «Персидско-русский словарь», том II, М., 1970, էջ 88:

96 «Գանձահանքն և Զողքագոմն, ըստ սահմանագրութեան նոցին յայտնին լինել յայնկոյս գետոյն (իմա՝ Ախուրյան – Գ. Բ.) յարևելեան Շիրակ (ընդգծումը մերն է – Գ. Բ.): (Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 28: Հմմտ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 174):

97 Գոմ > գոն անցում կատարվել է նաև Սյունիքի **Քաշաթաղ** գավառի **Վարազգյուն** (< Վարազգոն) գյուղանվան մեջ, որը նախապես հնչել է **Վարազգոմ**:

98 Հանդիպում են նաև **Ճլոխան** կամ **Ճալովխան** տարբերակները (տես Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 156): Ռուսական աղբյուրներում գյուղն արձանագրված է «Джаловхан» կամ «Джеловхан» ձևերով (տես Ռուսական 5-վերստանոց քարտեզ, նշվ. սլյանշետ):

առևտրական կարևոր ճանապարհին ընկած **Զողքագոմի** մոտ ժամանակին եղել է իջևանատուն (խան)<sup>99</sup>, ինչն ամրապնդել է գյուղանվան օտարահունչ տարբերակի «հիմնավորումը»:

Կցանկանայինք ստորև ներկայացնել որոշ նկատառումներ 1336 թ. արձանագրության մեջ հիշատակված՝ Հոռոմոսին նվիրաբերված գյուղերի հողատարածքների հյուսիսային սահմանը կազմող **«Խաչով փարախ»** տեղավայրի մասին: Որպես կանոն, հողատարածքների սահմանները տարվում էին բնական աշխարհագրական օբյեկտներով՝ ակնառու դիրք ունեցող բարձունքներով, գետահունքերով, բլրաշարքով ևն: Եթե **Զողքագոմի** (Ճոխքագոն) մեր տեղադրությունը ճիշտ է, ապա **Խաչող փարախը** (պարզեցված՝ **Խաչափարախ**) կարելի է նույնացնել ներկայիս Շիրակի մարզի **Բենիամին** և **Ազատան** գյուղերի միջև բարձրացող լեռնագագաթի հետ (բարձրությունը՝ 1625 մ), որը 20-րդ դ. սկզբին կոչվում էր **Ղարաքիլիսա**: Վերջինս, որ թուրքերեն նշանակում է «սև եկեղեցի» (նաև՝ «վանք», թրք. karakilise), որոշակի կապ ունի ներկայիս **Ազատանի** օտարահունչ **Խլի Ղարաքիլիսա** (Փոքր Ղարաքիլիսա) անվան հետ: Ընդ որում, գյուղի թուրքերեն անվանումը կարելի է համարժեք համարել **Խաչով փարախ**-ին, քանի որ, «գոմ» իմաստից բացի, «փարախ» բառն ունի նաև «վանք», «**իջևան**» նշանակությունները<sup>100</sup>: Ըստ այդմ՝ քննարկվող գյուղանունը կարելի է հասկանալ «**Խաչով եկեղեցի (վանք)**» կամ «**Խաչավանք**»: Հետևաբար պետք է ենթադրել, որ այժմյան **Ազատանի** պատմական անվանումը նույնպես եղել է **Խաչով փարախ** կամ **Խաչափարախ**<sup>101</sup>:

24. **Սահառունիք**: Հիշատակված է Անիի շահնշահ **Հովհաննես-Սմբատ Բագրատունու** (1021-1042)՝ Հոռոմոսի վանքի 1036 թ. (ՆՁԵ) նվիրատվական արձանագրության մեջ. «...ետու զիմ գեղս զ**Սահառունիս** ի մեր հանգստարանս թագաւորաց ի տիեզերահոչակ վանսս

99 Այդ մասին, ցավոք, գրականության մեջ որևէ հիշատակության չենք հանդիպել, թեև գյուղի օտար անվանումը վկայում է հենց դրա օգտին:

100 Տե՛ս **Աճառեան Հ.**, ՀԱԲ, հատ. Դ, Եր., 1979, էջ 485:

101 Այս առումով հմմտ. Երասխաձորի (Կաղզվան) **Ղարավանք (Խարավանք)** գյուղանվան **Ղաչավանք** (< **Խաչավանք**) տարբերակը (տե՛ս **Աղամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 96):

**Հոռոմոսի...**»<sup>102</sup>: Գյուղանունն անկասկած կապվում է համանուն նախարարական տոհմի հետ: Հայտնի է նաև, որ Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ, ապագա կյուրապաղատ **Դավիթ Սահառունին** Շիրակի **Մրեն** (Մրեան, Ախուրյանի աջ ափին, թրք. հորջորջմամբ՝ Karabağ) քաղաքագյուղում 623 թ. կառուցել է հիասքանչ տաճար<sup>103</sup>: Թերևս այս փաստից ելնելով՝ Ղ. Ալիշանը Սահառունիների տիրույթները տեղորոշում է Շիրակի հարավարևմտյան հատվածում՝ **Արշարունիքի** (Երասխաձոր) սահմանակցությամբ<sup>104</sup>: Սակայն վերոհիշյալ տոհմի իշխանության գրաված տարածքի և սահմանների մասին լրացուցիչ այլ տեղեկություններ չեն պահպանվել: Ուստի **Սահառունիք** գյուղի տեղորոշումն ավելի կիստակեցներ հարցը: Մեր կարծիքով՝ այն նույնանուն է ներկայիս **Սարխունլու** գյուղի հետ (կոչվել է նաև **Սորխունլու**), որը գտնվում է վերն արդեն հիշատակված **Տեկոր** գետակի **Ծփնի** օժանդակի ակունքների մոտ<sup>105</sup>: Ըստ էության, **Սահառունիքի** օտարահունչ անվանումն առաջացել է **Սահառունիք** > **Սահռունիք** տարբերակից<sup>106</sup>, որն ավելի ուշ դրափոխության հետևանքով սկսել է հնչել **Սառունիք (Սարհունիք)**<sup>107</sup>, իսկ օտարների կողմից արտաբերվել է **Սարխունլու** կամ ամենայն հավանականությամբ պարսկերենի ազդեցությամբ՝ **Սորխունլու** (պրսկ. سرخ – sōrx «կարմիր» բառից): Ավելացնենք, որ **Սահառունիքը (Սարխունլու կամ Սորխունլու)** հայաբնակ էր մինչև արևմտահայերի 1829 թ. մեծ գաղթը<sup>108</sup>:

102 Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 31: Հմմտ. Թրամանյան, էջ 172: Բագրատունիների տոհմական դամբարանը կազմված Սբ Գևորգ և Սբ Մինաս (?) եկեղեցիներից, գտնվում էր Հոռոմոսից փոքրինչ հյուսիս (տես Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 29):

103 Տես Հովհաննես կաթողիկոս **Դրասխանակերտցի**, նշվ. աշխ., էջ 82: Հմմտ. Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Եր., 2001, էջ 99 (տես նաև նույն գրքում գետեղված Վենետիկի 1862 թ. հրատարակության լուսապատճենը, էջ 70):

104 Տես Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 141:

105 Տես Ռուսական 5-վերստանոց քարտեզ, նշվ. պլանշետ: Ըստ Ղ. Ալիշանի՝ «Վերին և Ստորին Սորխանը կամ Սորխունլու» (Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 135):

106 Տես Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 358 (գրաբար բնագիրը):

107 Այս երևույթը հանդիպում է նաև որոշ անծանոթներում՝ Վահրամ-Վարհամ (բազմիցս հիշատակվում է Շիրակի վանական արձանագրություններում. տես Ալիշան Ղ., նշվ. աշխ., էջ 22, 23, 25, 26, 128, 150), Միրան-Միրհան, Պահլավունի-Փալիավունի (Զաքարիա Փալիավունի, հիշվում է Մոզուաց/Մազույս բնակավայրում ընդօրինակված Ավետարանում (չի պահպանվել). տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԴ դար», մասն Ա (1301-1325 թթ.), կազմողներ՝ Լ. Խաչիկյան, Ա. Մաթևոսյան, Ա. Ղազարոսյան, Եր., 2018: Հմմտ. Մաթևոսյան Վ., նշվ. աշխ., էջ 373), Ֆահրադ կամ Վահրադ (հյր: Հրահատ)-Ֆարհադ, առիծ-առոյծ (Վարդառոյծ անծանվան մեջ վկայված Բագնայրի 13-րդ դ. արձանագրություններից մեկում. տես Վարապետյան Ս., Բագնայրի վանքի արձանագրությունները, «Վարձք», Եր., 2013, N 9, էջ 24):

108 1829 թ. նոյեմբերի 6-ի հաշվառմամբ՝ գյուղում բնակվել են 6 տուն հայեր (տես Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 79): Գյուղում 1870-ական թթ. դեռ պահպանվել էին մատուռն ու գերեզմանոցը (տես Աղամյան Ա., նշվ. աշխ., էջ 101):



Կցանկանայինք ստորև ներկայացնել նաև մեր դիտարկումները Հարավարևմտյան Շիրակի վերաբերյալ: **Սահառունիքը**, որը, ինչպես նշվեց, ընկած էր **Տեկոր** վտակի **Ծփնի** օժանդակի ակունքների մոտ, փաստորեն, համանուն նախարարության հնագույն կենտրոնն էր<sup>109</sup>: 7-րդ դ. 1-ին տասնամյակներին, պայմանավորված **Կամսարականների** թուլացմամբ, **Սահառունիների** տիրույթներն աստիճանաբար ընդգրկել են նաև Տեկոր գետակի ներքին ավազանը, այդ թվում՝ **Մրեն** քաղաքը, որը դարձել է նրանց նոր կենտրոնը: Փաստորեն, տարածքային ձեռքբերումների շնորհիվ **Սահառունիների** իշխանությունը տվյալ ժամանակաշրջանում ներառել է արդեն Շիրակի ողջ հարավարևմտյան մասը: Ճիշտ է, նույն դարի կեսերին **Սահառունյաց** տոհմը մարեց, սակայն վերը նշված վարչական փոփոխություններն այնպես էին արմատավորվել, որ ձևավորված նոր վարչամիավորը (պայմանականորեն այն կոչենք **Սահառունիքի** կամ **Մրենի** գավառակ) պահպանվեց նաև հետագայում: Իսկ Մրենի ամայացումից հետո վերջինիս կենտրոնը դարձավ **Տեկոր** գետակից հարավ ընկած **Նախճավան** կամ **Նախիջևան** ավանը, որի անունով վարչամիավորը սկսեց կոչվել **Նախիջևանի** գավառակ<sup>110</sup>:

## Բ. Եզրակացություններ

Ուսումնասիրության ընթացքում հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Ինչպես Հայաստանի բազմաթիվ գավառների դեպքում, օտար տիրապետությունն իր բացասական ազդեցությունն է թողել նաև Շիրակի տեղանվանության վրա: Բազմաթիվ բնակավայրերի անվանումներ ժամանակի ընթացքում փոխարինվել են հայերենին խորթ տեղանուններով (հիմնականում՝ թուրքական) և անդառնալիորեն մո-

109 Մեր կարծիքով՝ նախապես Սահառունիների իշխանությունն ընդգրկել է նաև **Տեկոր**, **Խժկոնք**, **Ազրակ**, **Ծփնի**, թերևս նաև **Նախիջևան** բնակավայրերը: Սրանցից **Ազրակը Ազարակ** ձևով հիշատակվում է Տեկորի վանքի 1036 թ. (ՆՁԵ) արձանագրությունում (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 135: Հմմտ. «յ**Ազրկին**» Բագնայրի արձանագրություններից մեկում: Տես **Կարապետյան Ս.**, Բագնայրի վանքի արձանագրությունները, էջ 24): **Նախճավան** հնագույն տարբերակով **Նախիջևանը** հանդիպում է Մրենի կաթողիկեի արձանագրություններից մեկում, որ թողել է **Քազիկ Ա Բագրատունին** (990-1021) (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 138, **Կարապետյան Ս.**, Մրենը և նրա հուշարձանները, «Վարձք», Եր., 2012, N 7, էջ 56):

110 Տես **Աղամյան Ա.**, նշվ. աշխ., էջ 100, 102: Ռուսական տիրապետության շրջանում այն հայտնի էր որպես **Նախիջևանի տեղամաս** (уездок) Կարսի մարզի կազմում:

ռացվել: Երևույթ, որն ազգային պետականության դարավոր բացա-  
կայության հետևանք: Այնուամենայնիվ, հատկապես Արևմտյան Շիրա-  
կում մեծ թիվ են կազմում պատմական անվանումները պահպանած  
բնակավայրերը (Ագարակ կամ Ագրակ, Աղին, Անի, Արգինա<sup>111</sup>, Արդք >  
Արթիկ, Բագարան կամ Բագրան, Բավաց ձոր > Բվիկ, Երերույք (Հերե-  
րույք), Խծկոնք, Ծփնի, Կապս > Կապք, Կարմիր վանք, Մաղասբերդ,  
Մրեն, Նախճաւան > Նախիջևան, Որմտանի (Որոմանի)/Հոռոմ, Ջաջո-  
ւո, Սոսկերտ, Տեկոր ևն):

2. Զգալի թիվ են կազմում աղճատված կամ օտարահունչ իմաստա-  
վորում ստացած տեղանունները (Ալաման > Ալեմ, Աստեղանի > Աս-  
տախանա, Արջոռոխձ > Ալաջա, Գոռոխունեց/Գօռոխունեց > Գյորխանա,  
Գետիկ > Բաշ-Գեղիկլեր (Քյաղըլլար), Գինեկ > Քինակ, Զու (Զուավան  
(?) > Սուվանվերդի), Երգք, Երգից լեռ > Էքիզլեր, Թեղեակ > Թելյակ,  
Խաչորիկ/Խաչվորիկ > Հաջիվալի, Կումայրի > Գյումրի, Մոզուաց  
(Մոզույս) = Մոզույք > Մոքյուզ, Պորտանգ > Բարդագլը (Բարդախլու),  
Ջողբագոմ/Ճողբագոն > Ճլոխան, Սահառունիք > Սարխունլու (Սոր-  
խունլու), Ցնդո > Զինդի (Զիննի) ևն):

3. Հարկ է նկատի ունենալ, որ հայտնի են նաև մի շարք օտարացած  
հայկական տեղանունների բնիկ ձևերը (Ականք > Օրթա Գեղիկլեր  
(Քյաղըլլար), Բագնայր/Բգներ > Ղոզլիջա, Հառիձ > Ղփչաղ, Հոռոմոս  
> Ղոշավանք (Խոշավանք), Մարնաշեն > Ներքին Ղանլըջա (Վահրա-  
մաբերդ), Շիրակաշատ/Մավրիկոպոլիս > Աջամ-Մավրակ, Շիրակաւա-  
ն/Շիրակուան (Երազգաւորս) > Բաշ Շորագյալ, Տիրաշեն > Վերին Ղա-  
նլըջա (Մարնաշեն), Քեղարագոմ > Տայլար ևն):

4. Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ օտարահունչ  
գյուղանունները հաճախ եկանուտ օտարների կողմից բնիկ տեղա-  
նունների պարզ թարգմանության արդյունք են: Բարեբախտաբար,  
դրանց մի մասի հայերեն զուգահեռները պահպանվել են հայ մատե-  
նագրության էջերում և վիմագիր արձանագրություններում, ինչպես  
նաև դրանք հնարավոր է վերականգնել բավական մեծ ձգգրոտու-  
թյամբ՝ հաշվի առնելով լեզվաբանական որոշակի օրինաչափություն-  
ներ (Ազատա > Ազաջուղ (Աղզըաչքք), Բեռնոս > Աղուզում, Բուրե-  
նոց/Բորենոց > Քյաֆթարլու, Գայլառիձ > Ղուրթթափա կամ Ղուրդու-

111 Ավելի ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ներկայացնում ենք նաև այնպիսի  
բնակավայրեր, որոնց հողվածում չենք անդրադարձել:

դուլաղ (?), Դրաշպետ > Բայրախտար, Եզնկա > Օղուզլու, Խաչով  
փարախ (Խաչափարախ) > Ղարաքիլիսա, Մարաց մարգ > Իլանլու,  
Ջրծորիկ վանք > Սուբաթան (?), Տարուս > Դահաուլի, Ցամաքծով > Սու-  
սուզ, Քարհատ > Թաշնիկ ևն):

#### Գ. Հավելված

### Շիրակի վիմագիր արձանագրություններում հիշատակվող բնակավայրերի ցանկը

Ստորև ներկայացնում ենք հայտնի վիմագիր արձանագրու-  
թյուններում հիշատակվող Շիրակի քաղաքային և գյուղական բնա-  
կավայրերի ցանկը՝ պահպանելով դրանց բնագրային գրությունը:  
Առանձին դեպքերում տվել ենք սկզբնաղբյուրում հանդիպող տե-  
ղանունների հոլովված տարբերակները: Անորոշ կարգավիճակով  
տեղանունները ցույց են տրված (?) նշանով: Ցանկում չեն ներառվել  
Անի մայրաքաղաքի տեղավայրերը (թաղամասեր, փողոց-գուկակ-  
ներ, կուղպակներ, այգիներ, պահեզներ ևն), որոնք իր հիմնարար  
«**Անին և անեցիները**» (Եր., 2021) մենագրության 80-102-րդ էջերում  
ամենայն մանրամասնությամբ և բարեխղճությամբ ներկայացրել է  
պատմական գիտությունների դոկտոր **Կ. Մաթևոսյանը**:

1. Ագարակ կամ Ագրակ (գյուղ)
2. Ագատայ (գյուղ)
3. Ալաման (գյուղ)
4. Ականս կամ Ականց (Ակնաց գիղ, գյուղ)
5. Ակին (գյուղ)
6. Աղբնագեղ (գյուղ)
7. Առիձք (գյուղ)
8. Աստեղանի (գյուղ)
9. Ասմանես կամ Ասմանէ (գյուղ)
10. Արագէձ (գյուղ)
11. Արդք («Արդուց», գյուղ)
12. Արջուառձի կամ Արջուառջո վանք (Սբ Աստուածածին, վանք)<sup>112</sup>

<sup>112</sup> Մենաստանի 2-րդ՝ **Սբ Գրիգոր** եկեղեցին հիմնահատակ ավերված է, ուստի տեղադրությունն  
անհայտ է: 13-րդ դ. մի ձեռագրական հիշատակարանում հանդիպում է «**Արջուառեւծ**» տարբերա-

13. Արվաշ (գյուղ)
14. Աւեր] փանդուկ (գյուղ)
15. Աւերակ («Աւերկովն», գյուղ կամ տեղավայր (?))
16. Բագարան կամ Բագրան (ավան)
17. Բագնայր, Բգնայր կամ Բգներ (Սբ Աստուածածին, վանք)
18. Բէշքենակապ (գյուղ կամ տեղավայր (?))
19. Բուրենոց կամ Բորենոց (գյուղ)
20. Գաղտա (գյուղ)<sup>113</sup>
21. Գայլառիձ (գյուղ)<sup>114</sup>
22. Գանձայհանք (գյուղ)
23. Գաւռոխոնեց գեղ=Գօռոխոնեց (գյուղ)
24. Գետիկ (գյուղ)
25. Գերմըստու < Գերմաստ (գյուղ կամ տեղավայր (?))
26. Գինեկ (գյուղ)
27. Գողիս կամ Գողեց (Գողենց, Գոգիս (?), գյուղ)
28. Դրասապար (գյուղ)
29. Երգք (գյուղ)
30. Երերուք կամ Հերերվաց < Երերոյք-Հերերոյք (գյուղ և վանք)
31. Զու (գյուղ)
32. Թաղք (գյուղ)
33. Լմբատ կամ Լմպատ (Սբ Ստեփաննոս, վանք և գյուղ)
34. Խաչին մարգ (գյուղ կամ տեղավայր (?))
35. Խաչորիկ կամ Խաչորկան (գյուղ)
36. Խծկաւնից > Խծկօնք (վանք)

կը, որը, կարծում ենք, ժողովրդական ստուգաբանության արդյունք է (տես **Մաթևոսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 166):

<sup>113</sup> Արտաքնապես հիշեցնում է ներկայիս ՀՀ Արագածոտնի մարզի **Գյալթո** գյուղանունը (Թալինի շրջան):

<sup>114</sup> Բնակավայրի տեղադրության համար առաջարկում ենք երկու տեսակետ. ա) **Գայլառիձը** գտնվել է Արևմտյան Շիրակում՝ Անիից շուրջ 30 կմ հյուսիս-արևմուտք բարձրացող և այժմ Դուրդուլաղ կոչվող լեռնագագաթի (1616 մ, թրք. Kurtukulak, բառացիորեն «գայլականջ») շրջանում: Նշված լեռան հարավային ստորոտին ընկած են **Ղայնալըխ** և **Ճալա** (Զալա, թրք. Cala) բնակավայրերը: Թերևս գյուղը կարելի է նույնացնել **Ճալայի** հետ (Գայլառիձ > Զալա/Ճալա (?)): բ) **Գայլառիձը** պետք է փնտրել ՀՀ Շիրակի մարզի ներկայիս **Բագրավան** կայարանի մոտակայքում օտարահունչ Դուրթթափա («գայլաբլուր», թրք. Kurttepe) լեռան շրջանում (տես ԽՍՀՄ ԶՈՒ ռազմական քարտեզ, K-38-32 պլանշետ (մասշտաբ 1:200000)): Ի դեպ, **Գայլառիձը** կարելի է ենթադրաբար նույնացնել նույն շրջանում գտնվող **Բուղղաշեն** ավերակի հետ (ընդ որում, ժամանակակից **Բագրավան** գյուղը նույնպես կոչվել է **Բուղղաշեն**):

37. Ծառավան (ավան)
38. Ծըմբաբար (գյուղ)<sup>115</sup>
39. Ծմակ (գյուղ)
40. Կաղղուց կամ Կաղղունց (գյուղ)
41. Կառնուտ (գյուղ կամ տեղավայր (?))
42. Կարմիր վանք (վանք)
43. Հաղէն = Աղին («Անու Հաղէն», գյուղ)<sup>116</sup>
44. Հառիճա(յի) վանք (Սբ Աստուածածին, վանք)
45. Հոռոմոս (Հոռովմոս, Հոռոմի) կամ Սուրբ Յովանէս (վանք)
46. Մաննեխուտ (գյուղ)
47. Մաշկակապ < Մշակակապ (?) (գյուղ)
48. Մարաց մարգ (Մարանց մարգիկ, գյուղ)
49. Մարնաշեն (Սբ Աստուածածին, վանք և գյուղ)<sup>117</sup>
50. Մշակունեց (գյուղ)<sup>118</sup>
51. Մողորիս կամ Մոկորիս (գյուղ)<sup>119</sup>
52. Մոգուաց կամ Մոգույս/Մոգույք (գյուղաքաղաք)<sup>120</sup>
53. Մրեն կամ Մրեան (քաղաք)
54. Նորաղբոյրիկ (գյուղ)
55. Նորաշինիկ (գյուղ կամ տեղավայր (?))
56. Նորս < Նորք (գյուղ)<sup>121</sup>
57. Շավթա (գյուղ)

<sup>115</sup> Մեր կարծիքով՝ ՀՀ Շիրակի մարզի **Նոր կյանք** գյուղի (պատմ.՝ Շոթա) հարևան **Վարդաբար** բնակավայրն է:

<sup>116</sup> Ինչպես հուշում է տեղանունը, վերոհիշյալ գյուղը տեղակայված է եղել Արևմտյան Շիրակի տարածքում, հավանաբար՝ Անիի մերձակայքում (?): Համանուն բնակավայր կար նաև Արևելյան Շիրակում (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի **Աղին գյուղ**), և թերևս շփոթից խուսափելու համար Անի քաղաքի շրջանի բնակավայրը կոչել են **Անիի Աղին** (բրբռ. **Անու Հաղեն**):

<sup>117</sup> Ըստ Հ. Եղիազարյանի՝ պատմական **Մարնաշեն** գյուղը նախապես տեղակայված է եղել վանքին կից՝ ներկայիս **Վահրամաբերդի** մոտ (ՀՀ Շիրակի մարզ) (տես **Եղիազարյան Հ.**, նշվ. աշխ., էջ 72):

<sup>118</sup> Ղ. Ալիշանը գյուղանվան ուղիղ ձևը նշում է **Մշակունիք** (տես **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 179):

<sup>119</sup> Ղ. Ալիշանը սխալմամբ նույնացրել է **Մեծ Պարնի** բնակավայրի հետ (օտար հորջորջմամբ՝ Բեքյանը, Ալիշանի աշխատության մեջ՝ «Պէկբնտ»), որն իբր գտնվում էր **Հառիճի** մոտ («մերձ ի Հառիճայ»): Իրականում Հառիճի հարևանությամբ՝ շուրջ 5 կմ հյուսիս-արևմուտք, **Փոքր Պարնին** է (այժմ՝ Անուշավան, ՀՀ Շիրակի մարզ): Իսկ **Մեծ Պարնին** ՀՀ Լոռու մարզի կազմում է: Մեծամուն հայագետին թերևս շփոթեցրել է գյուղերի անվանումների նմանությունը (տես նույն տեղում, էջ 164):

<sup>120</sup> Ըստ Ղ. Ալիշանի՝ գյուղանվան ուղիղ ձևն է **Սոգոյք** (տես նույն տեղում, էջ 8): Սակայն, ինչպես արդեն նշել ենք, չպահպանված մի Ավետարանի հիշատակարանը (1313 թ.) ավելի է ճշտում բնակավայրի անվանումը՝ **Սոգույս < Սոգույք** («ի գիւղաքաղաքիս, որ կոչի **Սոգույս**») (տես «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ: ԺԴ դար», մասն Ա (1301-1325 թթ.), էջ 235):

<sup>121</sup> Չուտ իմաստային առումով ենթադրելի է, որ ներկայիս **Ենգիքոյ** (թրք. Yengiköy = Yeniköy, բառացիորեն՝ «նոր գյուղ») բնակավայրն է **Նախճավանից** (Նախիջևան) շուրջ 10 կմ արևելք **Տեկոր** գետի ստորին ավազանում:

58. Շիրակվան = Շիրակաան կամ Երագգաուրս (քաղաքագյուղ)
59. Շնջանիկ կամ Շիջանիկ (գյուղ կամ տեղավայր (?))
60. Շոթա (գյուղ)<sup>122</sup>
61. Պորտանգ (գյուղ)
62. Զողքայգոն կամ ձոխքագոն (գյուղ)
63. Զրձորիկ վանք (գյուղ)<sup>123</sup>
64. Սահառունիք (գյուղ)
65. Սառնաղբիւր (գյուղ)
66. Սեղանուց < Սեղանոց, Սեղանք (?) (գյուղ)
67. Սուրբ Գէորգա բերդ (բերդ)
68. Սուրբ Գէորգ կամ Ծառաքար (վանք)
69. Վաղաւեր (գյուղ)
70. Վասկափող (գյուղ կամ տեղավայր (?))
71. Վարդենոց նորք կամ Վարդենաց (Վարդանց) նորք (գյուղ կամ տեղավայր (?))<sup>124</sup>
72. Տարուս (գյուղ)<sup>125</sup>
73. Տափիս < Տափիք (գյուղ)
74. Տգնիս = Տիգնիս (բերդ և գյուղ)
75. Տեկոր (վանք և գյուղ)
76. Տիրաշէն (գյուղ)<sup>126</sup>
77. Ցամաքծով (գյուղ)
78. Ցընդոյ (գյուղ)
79. Ցիցք (գյուղ)
80. Քարհատ (գյուղ)<sup>127</sup>

<sup>122</sup> Ներկայիս **Նոր Կյանք** գյուղն է, որ ընկած է ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքից 6 կմ հյուսիս-արևմուտք: Պատմական անվանումը ձշտվում է ըստ գյուղի **Սուրբ Գրիգոր Լուսավորիչ** եկեղեցու արձանագրությունների (տես ԴՀՎ, պրակ X, էջ 83, 86): Ընդ որում, **Շոթա** գյուղանունը կապված է վրացական հայտնի անձնանվան հետ (վր. შოთა): Իրականում այն առնչվում է **Շոթ** տեղանվան հետ, որը հանդիպում է նաև պատմական **Արտագում** (Մակվի գավառ): Կարծում ենք՝ Շիրակի գյուղի անունը կազմված է սեռական վերջածանցով **Շոթ+ա(յ)**:

<sup>123</sup> Ենթադրաբար նույնացրել ենք **Գաւռոխոնեցից** շուրջ 5 կմ հյուսիս-արևմուտք գտնվող **Սուրբաթան** գյուղի հետ (թրք. Subatan, բառացիորեն՝ «ջրով ծածկված» կամ «ջրասույգ»):

<sup>124</sup> Որոշակի վերապահումով կարելի է նույնացնել **Բագնայրից** (Ղոզլիջա) շուրջ 5 կմ հյուսիս գտնվող **Գյուլլուջա** (թրք. Güllüce, թարգմանաբար՝ «վարդուտ») = «վարդենոց») ամառոցի կամ յայլայի հետ Ցընդորից (Cindi) հարևանությամբ: Մեր կարծիքով գյուղը կոչվել է ուղղակի **Վարդենոց**:

<sup>125</sup> Մեր կարծիքով՝ ավելի ուշ օտար հորջորջմամբ վերածվել է **Ղահարլի-ի**: Այժմ **Գետք** գյուղ ՀՀ Շիրակի մարզում: Գյումրի-Կումայրիից 8 կմ հարավ-արևմուտք:

<sup>126</sup> Ըստ Հ. Եղիազարյանի՝ ներկայիս **Մարմաշեն** գյուղն է ՀՀ Շիրակի մարզում (տես Եղիազարյան Հ., նշվ. աշխ., էջ 82):

<sup>127</sup> Ենթադրաբար նույնացրել ենք **Տեկորից** շուրջ 8 կմ հյուսիս-արևելք գտնվող ներկայիս **Թաշնիկ** (Դաշնիկ) գյուղի հետ:

81. Քեղարագոն (բերդավան)

82. Քեղուտ (գյուղ կամ տեղավայր (?))

**Գեղամ Մ. Բադալյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի պատմական աշխարհագրությունը, պատմական ժողովրդագրությունն ու քարտեզագրությունը:

Summary

## ON THE LOCATION OF SHIRAK'S SETTLEMENTS

Historical-geographical notes

Gegham M. Badalyan

*Candidate of Sciences in History*

**Keywords** – Shirak, Bavats՝ dzor, Bernavs, Gorokhnets՝, Drashpet, Yeznka, Yergk՝, Karmnjadzori vank՝, Horomosi vank՝, Marats՝ marg, Saharunik՝, K՝egharagom.

As the majority of Armenian regions, the canton of Shirak, despite being one of the most extensive and populous cantons of the Greater Armenian province of Ayrarat, is presented quite superficially and without much detail in medieval Armenian historiography. A different pattern arises from the examination of the epigraphs of religious and cultural centers of the canton, which reveal more than 120 settlements and other locales (farmsteads, estates, fields and pastures, gardens, and even town districts), significantly complementing the data regarding Shirak and allowing one to form an idea about the toponyms of the region. This distinguishes Shirak as one of those “fortunate” Armenian cantons on whose locales a remarkable and a relatively comprehensive data is preserved. The first serious examination attempt of the toponyms recorded in the epigraphs of the region was undertaken by Gh. Alishan in his renowned work “Shirak” (Venice, 1881), preceded by a few similar observations by Nerses Sargisyan, another Mekhitarist monk. Assuredly, the prominent Armenologist could not deliberate on the majority of survived toponyms due to lack of necessary data. The current article is a humble attempt to fill this lacuna. Re-examining both the epigraphic documents and the historical accounts, the modern designations and, by extension, the geographic locations of a whole series of settlements and other locales are emended. The research revealed that the Armenian toponyms have predominantly

been either translated (interpreted) and/or distorted by the incoming Turkic populace. Based on this concept and other considerations, we have examined more than twenty toponyms (mostly from Western Shirak where their Armenian character was better preserved), providing necessary comments and conclusions.

Резюме

## О МЕСТОПОЛОЖЕНИИ ПОСЕЛЕНИЙ ШИРАКА

Историко-географические заметки

Гегам М. Бадалян  
*Кандидат ист. наук*

**Ключевые слова** - Ширак, Бавац дзор, Бернавс, Горохо-  
нец, Драшпет, Езка, Ергк, Кармнджадзори ванк, Оромоси ванк,  
Марац марг, Сааруник, Кехарагом.

Будучи одной из наиболее обширных областей провинции Айратат Великой Армении, Ширак (подобно многим армянским регионам), тем не менее, весьма поверхностно и не детально описан в средневековой армянской историографии. Иная картина предстает при исследовании эпиграфических памятников ряда духовно-культурных центров региона, в котором упоминается более 120 поселений и прочих видов местности (хутора, имения, поля и пастбища, сады и даже отдельные кварталы поселений), что существенно восполняет данные по Шираку и позволяет составить определенное представление о топонимике региона. В этом смысле Ширак является одним из тех «счастливых» армянских регионов, о топонимике которого сохранились довольно примечательные и сравнительно полные данные.

Следует отметить, что первую попытку серьезного изучения топонимов, встречающихся в эпиграфике, предпринял Г. Алишан в своей знаменитой работе «Ширак» (Венеция, 1881). Из более ранних памятников отдельные замечания о топонимии Ширака зафиксированы в трудах другого монаха-мхитариста – Нерсеса Саргисяна. При этом в связи с отсутствием данных большая часть упоминаемых топонимов не была рассмотрена выдающимся арменоведом.

Наша статья является скромной попыткой восполнить этот пробел. Вновь пересмотрев сведения как эпиграфических документов, так и историографов, мы уточнили целый ряд современных названий местностей, и, следовательно, их географическое положение. Анализ показал, что армянские



топонимы были в основном либо переведены (осмыслены), либо искажены пришлым тюркским элементом. Основываясь на этой научной концепции, а также учитывая ряд других обстоятельств, мы подвергли анализу более двадцати топонимов (в основном на территории Западного Ширака, где их исконная армянская форма лучше сохранилась), снабдив текст необходимыми комментариями и выводами.

## REFERENCES

1. Ashkharhats'öyts' Vardanay vardapeti", k'nnakan hratarakut'iwn Hayk Përpëreani, Bariz, 1960 (In Armenian).
2. "Bařaran parskerën-hayerën", kazmets' Garegin k'ah. Y. Kirakosean, Jugha-Spahan, 1933 (In Armenian).
3. "Divan hay vimagrut'yan", prak I. Ani k'aghak', kazmets' H. A. Örbeli, Yer., 1966 (In Armenian).
4. "Divan hay vimagrut'yan", prak X. Shiraki marz, kazmets' S. G. Barkhudaryan, Yer., 2017 (In Armenian).
5. "Hay zhoghovrdi patmut'yun", hat. II, Yer., 1984 (In Armenian).
6. "Hayeren dzeragreri hishatakanner: ZHD dar", masn A (1301-1325 t't.), kazmoghner` L. Khach'ikyan, A. Mat'evosyan, A. Ghazarosyan, Yer., 2018 (In Armenian).
7. "Hushagrakan zhařangut'yun", Haykakan chartarapetut'yunn usumnasirogh himnadrami (RAA) gitakan usumnasirut'yunner, girk' ZHD, Yer., 2011 (In Armenian).
8. "Pamjatnaja knizhka I adress-kalendar' Karsskoj oblasti na 1914 god", "Spisok naselennyx punktov Karsskoj oblasti na 1-oje janvarja 1913 goda", [Kars] (In Russian).
9. "Patmut'iwn Ghewondeay Metsi vardapeti Hayots'", S.-Peterburg, 1887 (In Armenian).
10. "Persidsko-russkij slovar'", t. II, M., 1970 (In Russian).
11. "Step'annosi Tarönets'woy Asoghkan Patmut'iwn Tiezerakan", S.-Peterburg, 1885 (In Armenian).
12. "Turecko-russkij slovar'", M., 1974 (In Russian).
13. Achařean H., Hayerën armatakan bařaran, hat. A, Yer., 1971, hat. B, Yer., 1973, hat. G, Yer., 1977 (In Armenian).
14. Adamyan A., Mi teghekagir Karsi marzi veraberyal, "Banber Hayastani arkhivneri", Yer., 1970, N 2 (In Armenian).
15. Alishan Gh., Shirak: Teghagrut'yun-patkerats'oyts', Venetik-Sb. Ghazar, 1881 (In Armenian).
16. Ghazar P'arpets'i, Hayots' patmut'yun: T'ught' Vahan Mamikonyanin, Yer., 1982 (In Armenian).
17. Hakobyan T'. Kh., Anii patmut'yun, girk' yerkrord (1045 t'. minch'ev ankumn u amayats'umë), Yer., 1982 (In Armenian).
18. Hakobyan T'. Kh., Melik'-Bakhshyan S. T., Barseghyan H. Kh., Hayastani yev harakits' shrjanneri teghanunneri bařaran, hat. 5, Yer., 2001 (In Armenian).
19. Harut'yunyan B., "Vayots' dzor" teghanvan stugabanut'yan harts'i shurj, "Lraber" has. git., Yer., 1967, N 9 (In Armenian).
20. Hovhannes kat'oghikos Draskhanakertts'i, Hayots' patmut'yun, Yer., 1996 (In Armenian).

21. **Inchichean Gh.**, Ashkharhagrut'iw n ch'orits' masants' ashkharhi, Masn arajin: Asia, hat. A, Venetik- Surb Ghazar, 1806 (**In Armenian**).
22. **Inchichean Gh.**, Storagrut'iw n Hin Hayastaneayts': Mets Hayk', Venetik-S. Ghazar, 1822 (**In Armenian**).
23. **Jalaleants' S.**, Chanaparhordut'iw n I Metsn Hayastan, masn A, Tp'khis, 1842, masn B, Tp'khis, 1858 (**In Armenian**).
24. **Karapetyan S.**, Bagnayri vank'i ardzanagrut'yunnerë, "Vardzk'", Yer., 2013, N 9 (**In Armenian**).
25. **Karapetyan S.**, Horomosi vanakan hamaliri vimagrakan zharangut'yunë, "Vardzk'", Yer., 2021, N 15 (**In Armenian**).
26. **Karapetyan S.**, Mrenë yev nra hushardzannerë, "Vardzk'", Yer., 2012, N 7 (**In Armenian**).
27. KHSHM ZU k'artez, K-38-32 planshet (masshtab` 1:200000) (**In Russian**).
28. **Mat'evosyan K.**, Anin yev anets'inerë, Yer., 2020 (**In Armenian**).
29. **Movses Khorenats'i**, Hayots' patmut'yun, Yer., 1981 (**In Armenian**).
30. **Muradyan H.**, Karsi nahangi varch'azhoghovrdagrakan nkaragirë 19-rd d. arajin yeresnamyakin, Yer., 2006 (**In Armenian**).
31. **P'avstos Buzand**, Hayots' patmut'yun, Yer., 1987 (**In Armenian**).
32. Rusakan 5-verstanots' k'artez, D-8: Kars planshet (masshtab` 1:210000), Doni Rostov, 1941 (**In Russian**).
33. **Sargisean N.**, Teghagrut'iw n k' I P'ok'r yew I Mets Hays, Venetik-S. Ghazar, 1864 (**In Armenian**).
34. **Sebeos**, Patmut'yun, Yer., 2005 (**In Armenian**).
35. **Simeon kat'oghikos Yerevants'i**, Jamb, Yer., 2003 (**In Armenian**).
36. T'urk'iaiyi Hanrapetut'yan razmakan k'artez, planshet Kars (masshtab` 1:200000) (**In Turkish**).
37. **Vardan Arevelts'i**, Tiezerakan patmut'yun, Yer., 2001 (**In Armenian**).
38. **Yeghiazaryan H.**, Shiraki lernahovti patmakan hushardzannerë, Yer., 1975 (**In Armenian**).
39. **Yeremyan S. T.**, Hayastanë yev harevan yerkrnerë 855-953 t't., "Hay zhoghovrdi patmut'yun", hat. III, Yer., 1976 (**In Armenian**).